

**ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ  
ԵՎ ՉԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**  
*Ռուբեն Մելքոնյան*

Առկա փաստերը թույլ են տալիս պնդել, որ Թուրքիայի տարածքում բնակվող եւ ուժացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի ու նրանց սերունդների համար արմատներին վերադառնալու հարցում կարող են խթան դառնալ տարատեսակ հանգամանքներ: Այս առումով, վերջին տարիներին նկատվող հայ-թուրքական տարբեր շփումները, հայ զբոսաշրջիկների այցերը Արեւմտյան Չայաստան, Թուրքիայում հայկական թեմատիկայով տպագրվող գրքերը եւ այլ հանգամանքներ նպաստում են իսլամացված հայերի իրական ինքնության կարեւորման գործընթացին: Հետաքրքիր այս երեւոյթը դիտարկենք վերջին ժամանակներս հայ հասարակական-քաղաքական օրակարգը մեծապես զբաղեցրած Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում տեղի ունեցած պատարագի եւ դրան ուղեկցած ու հաջորդած որոշակի դեպքերի համատեքստում:

Այսօր արդեն ակնհայտ իրողւթյուն է, որ Սուրբ Խաչ եկեղեցում պատարագի թույլտվւթյունը թուրքական քարոզչական մեքենան փորձեց օգտագործել իր նպատակների համար, սակայն մեծ մասամբ ձախողվեց: Թուրքական կազմակերպված շուուի բացասական դրսեւորումների կողքին սկսվեց մեզ համար ուշագրավ մի գործընթաց. Սուրբ Խաչի պատարագը դարձավ Արեւմտյան Չայաստանի տարբեր վայրերում բնակվող իսլամացված, ծպտյալ հայերի ու նրանց սերունդների շրջանում իրական ինքնության բացահայտման կարեւոր խթան:

Այստեղ հարկ ենք համարում որոշակի պարզաբանում անել. հայտնի փաստ է, որ Չայոց ցեղասպանւթյան տարիներին եւ դրանից հետո Թուրքիայում սկսվեց մշակութային եղեռն, որին զոհ գնացին ավելի քան երկու հազար հայկական եկեղեցիներ, վանքեր, սրբատեղիներ: Եկեղեցիների ու վանքերի փլուզումն անմիջականորեն ազդել է բռնի իսլամացված հայւթյան ինքնւթյան վրա, քանի որ հայոց լեզվի, հայոց մշակւթյթի փաստացի չգոյւթյան պայմաններում, թեկուզ եւ չգործող, եկեղեցիները նրանց ինքնւթյունը վառ պահող կռվաններ

կարող էին լինել եւ լուռ վկան հայկական նախկին ներկայության: Այսինքն՝ այդ պայմաններում եկեղեցին զուտ ճարտարապետական կառույցից վերածվում է հայկական ինքնության բաղադրիչի, իսկ որոշ դեպքերում՝ միակ բաղադրիչի:

Այս առումով, հարկ է նշել, որ իսլամացված եւ ծպտյալ հայերը մինչեւ օրս էլ կազմակերպում են գաղտնի ուխտագնացություններ դեպի հայկական եկեղեցիների ավերակներ: Նմանատիպ օրինակներից է Սասունի Մարութա սարի վրա գտնվող Սուրբ Աստվածածին վանք ամեն տարի հուլիսին կազմակերպվող ուխտը, որը վերջին մեկ-երկու տարում դարձավ նաեւ թուրքական մամուլի ուշադրության առարկա եւ փաստորեն «բացահայտվեց»: Բացի սրանից, կան բազմաթիվ այլ օրինակներ, որոնց մասին մենք անձամբ ենք տեղեկացել Արեւմտյան Չայաստանի տարբեր վայրերում բնակվող հայության սերունդների հետ շփումների արդյունքում: Օրինակ՝ տարվա որոշակի օրերին գաղտնի ուխտագնացություն է կատարվում Մշո Առաքելոց վանքի, Դերսիմի մի քանի եկեղեցիների ավերակներ: Այն, որ հայկական, թեկուզ եւ կիսաքանդ, եկեղեցիները կարելուր նշանակություն ունեն իսլամացված եւ ծպտյալ հայերի սերունդների համար, կարող է փաստել մեկ այլ օրինակ, որի մասին տեղեկացել ենք 2008թ. Մուշում: Այսպես, Մուշ քաղաքի հայկական եկեղեցիներից մեկը 1980-ականներին պետության կողմից քանդվում է, եւ նույն տեղում կառուցվում է դպրոց: Շինարարության ժամանակ օգտագործվում են նաեւ եկեղեցու քարերը եւ, ինչպես մեզ փոխանցեց հայկական արմատներով մի մշեցի, Մուշում բնակվող ծպտյալ հայերը ներքին պայմանավորվածության են գալիս, եւ նրանցից ոչ մեկն իր երեխային չի ուղարկում այդ դպրոց:

Անդրադառնալով Աղթամարի Սուրբ Խաչի հանգամանքին՝ նշենք, որ այն մեծ աղմուկը, որը թուրքական իշխանությունները բարձրացրին եկեղեցու շուրջ, իսլամացված հայերի համար ունեցավ բոլորովին այլ էֆեկտ. փաստորեն թուրքական պետությունն իր միջոցներով վերականգնեց հայկական եկեղեցին, արվեց պաշտոնական բացում, թույլ տրվեց տարին մեկ անգամ անցկացնել պատարագ, կոչ արվեց զբոսաշրջիկներին այցելել Աղթամար եւ այլն: Այսինքն՝ Սուրբ Խաչ եկեղեցու նկատմամբ, կարելի է ասել, ձեւավորվեց պետական վերաբերմունք, եւ սա հատկապես առանձնահատուկ է նրանով, որ Թուրքիայի արեւելյան շրջաններում Սուրբ Խաչը միակն է, որի հայկական պատկանելությունը թուրքական պետությունը, թեկուզ անուղղակի, ճանաչում է: Վերոնշյալ

հանգամանքը փոքր-ինչ վստահություն է ներշնչում իսլամացված հայերի սերունդներին, որոնք արդեն կարող են ոչ թե գաղտնի այցելել հայկական խոնարհված սրբավայրեր, այլ բացահայտ գնալ ուխտի թեկուզ եւ եկեղեցու կարգավիճակ չունեցող ու թանգարան համարվող Սուրբ Խաչ եկեղեցի:

Այս երեւոյթը ցայտուն կերպով ի հայտ եկավ արդեն պատարագի օրը, ինչի մասին սկսեցին տեղեկություններ տարածվել: Հուրախություն մեզ, այդ ամենը չի վրիպել պատարագի ժամանակ Վանում գտնվող հայաստանցի լրագրողների ուշադրությունից, եւ նրանք փոխանցում են բավական հետաքրքիր մանրամասներ: Օրինակ՝ news.am լրատվական կայքէջի թղթակից Անդրանիկ Իսպիրյանն իր հոդվածում նշում է. «Վանից, Մուշից, Սասունից, Դերսիմից, Համշենից եւ Թուրքիայի այլ վայրերից Աղթամար եկած ծպտյալ հայերի ուրախությունը եւ արտասուքը խոսում էր այդ մարդկանց համբերատարության եւ համարձակության մասին: Մուշից 20 միկրոավտոբուսներով եւ մարդատար մեքենաներով պատարագին մասնակցելու եկածները մոմ էին վառում, համբուրում չտեղադրված խաչը եւ արտասվում... Իրենց շուրջը հայեր տեսնելով՝ շատերը փորձում էին պատմել, արտահայտել իրենց տարիների թաքցրածը»: Ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաեւ «Առավոտ» թերթի լրագրող Գոհար Հակոբյանը. իսլամացված հայի թո՞ւ՝ 38-ամյա Սինան Դեմիրբաշը հայ լրագրողին պատմել է, որ հինգ տարի առաջ մահացած իր Ջաֆեր պապը մահից առաջ ընտանիքին հայտնել է, որ իրենք իրականում հայ են եւ անգամ ցույց է տվել իր տոհմական լուսանկարները, որոնք տասնամյակներով խնամքով թաքցրել է: Ըստ Սինանի, միայն Վանում իսլամացված հայերի եւ նրանց սերունդների թիվը հասնում է հազարի:

Պատարագից հետո կղզում գտնվող իսլամացված հայերից ոմանք փորձել են գտնել իրենց հարազատներին Հայաստանում, հայտնել են իրենց նախկին հայկական ազգանունները, ծնողների, պապերի, տատերի հայկական անունները եւ խնդրել հայաստանցիներին օգնել:

Այդ նույն օրերին թուրքական մամուլում լայն տարածում գտավ նաեւ իսլամացված հայերի կրոնադարձման (քրիստոնեություն վերընդունելու) թեման, եւ փորձ արվեց դա եւս կապել Սուրբ Խաչի պատարագի հետ: Քրիստոնեություն վերընդունելու խնդիրը ներկայացվեց Ստամբուլի Հայոց պատրիարքության ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի զարմիկների օրինակով. այսպես, Դիարբեքիրում ապրող

Արամ Սրբազանի քույրն ու փեսան 1950-ական թվականներին ստիպված կրոնափոխ են եղել եւ ընդունել իսլամ: Մի քանի անգամ մամուլում խոսվել էր, որ հայ բարձրաստիճան հոգեւորականն ունի մուսուլման ազգականներ, ինչը չէր ժխտել նաեւ ինքը՝ Արամ Սրբազանը: Եվ ահա վերջերս տեղեկություն տարածվեց, որ 2010թ. մայիս ամսին Արամ արքեպիսկոպոսի Դիարբեքիրում բնակվող երկու զարմիկները՝ 33-ամյա Մեսուրե Քափլանը եւ 28-ամյա Ջիհան Բեսքինսիզը, կրոնադարձ են եղել՝ վերադառնալով քրիստոնեության: Նրանք իրենց անձնագրերում փոխել են նաեւ ազգային պատկանելությունը՝ գրվելով հայ եւ ընդունել են հայկական անձնանուններ. Մեսուրեն դարձել է Սիրուն, իսկ Ջիհանը՝ Պարետ: Կրոնադարձվելուց հետո նրանք պատմել են, որ տասնամյակներով իրենց ընտանիքը վարել է ծպտյալ հայի կենսակերպ. տանը եւ հայկական միջավայրում եղել են հայեր, իսկ դրսում, աշխատանքի վայրում իրենց պահել են որպես մուսուլման, եւ անգամ իրենց մերձավոր շրջապատը չի իմացել, որ իրենք ոչ թե քուրդ են, այլ՝ հայ:

Դիարբեքիրի ծպտյալ հայերի շրջանում բավական տարածված են նաեւ ներքին ամուսնությունները. օրինակ, Մեսուրե-Սիրունի ամուսինը՝ Քուդրեթին Քափլանը, ծպտյալ հայ է եւ նույնպես դիմել է կրոնադարձության՝ ընդունելով քրիստոնեություն: Հայկականության վերադարձածները նաեւ նշել են, որ Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցու վերակառուցումից հետո պատրաստվում են մկրտվել հենց այնտեղ: Պարետը եւ Սիրունը փոխանցել են նաեւ, որ Դիարբեքիրում բազմաթիվ ծպտյալ հայեր կան, որոնք չեն համարձակվում բացահայտել իրենց իրական ինքնությունը եւ վերադառնալ հայկականության, սակայն անգամ նրանց մոտ վերջերս սկսվել է արմատների կարելորդան գործընթաց, որը հետզհետե վերածվում է զարթոնքի:

Ծպտյալ հայերի շրջանում սկսված կրոնադարձության եւ արմատների որոնումների գործընթացին է անդրադարձել նաեւ Պոլսո Հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ Աթեշյանը՝ նշելով. «Անատոլիայում բազմաթիվ հայեր չեն համարձակվում ասել, որ հայ են: Ինչքան մեր երկիրը ժողովրդավար դառնա, այնքան շատ մարդիկ կվերադառնան իրենց կրոնին: Նույնիսկ այսօր Թուրքիայի չորս կողմերից՝ Թունջելիից, Տրապիզոնից, Կաստամունուից երիտասարդներն իրենց ընտանիքների արմատները գտնելու համար դիմում են մեզ»:

Ավելորդ չէ նշել, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուն տեղի ունեցած պատարագը եւ բռնի իսլամացված հայերի կրոնադարձության մասին տեղեկությունները եւս մեկ առիթ դարձան, որպեսզի Թուրքիայում ազգայնամոլական մամուլը եւ գործիչները բացասական երանգներով անդրադառնան իսլամացված հայերի թեմային՝ կրկնելով իրենց նախկին անտրամաբանական թեզերը: Խնդրին կրկին անդրադարձավ պատմակեղծարար Յուսուֆ Յալաչօղլուն՝ նշելով, որ Թուրքիայում ամենաքիչը հինգ հարյուր հազար ծպտյալ հայեր կան:

Ամփոփելով՝ նշենք, որ վերոհիշյալ գործընթացները եւս մեկ անգամ փաստում են, որ Թուրքիայում էթնիկ ինքնության հիմնախնդիրները ծավալվում եւ նորանոր դրսեւորումներ են ունենում:

## **ԼԵՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐԸ**

### ***Արեստակես Սիմավորյան***

Եվրոպական, մասնավորապես արեւելաեվրոպական երկրներում՝ Ռումինիա, Հունգարիա, Լեհաստան, այսօր բնակվում են հայերի սերունդներ, որոնք հարյուրամյակների ընթացքում ենթարկվել են դավանափոխության: Հատկապես Լեհաստանի դավանափոխ հայերի սերունդների մեծ մասը կորցրել է նաեւ ազգային ինքնագիտակցությունը, խզել կապերը Հայաստանի եւ Հայության հետ: Սակայն պետք չէ կարծել, թե Հայության այս տարադավան խմբում վերջնականապես մարել է հայկական ինքնագիտակցությունը. բազում «լեհացած» հայեր որոշակիորեն պահպանում են հայ լինելու հիշողությունը: Դրա խոսում վկայությունն է այն, որ վերջին տասնամյակներին Լեհաստանում ծագումով հայ կաթոլիկները հետադարձ հայացք են նետում իրենց անցյալին, փնտրում իրենց արմատները, փորձում կապվել այն ամենին, ինչը հայկական է:

#### **Պատմական ակնարկ**

Լեհահայերի հիմնական զանգվածը բռնի կաթոլիկացման է ենթարկվել 17-րդ դարում՝ Վատիկանի նախաձեռնած եկեղեցական ունիայի արդյունքում, որն այսպես կոչված «կրոնական հերձվածքի» դեմ պայքարի հետեւանք էր՝ ուղղված այլադավան (հայ առաքելական եւ ուղղափառ) եկեղեցիների դեմ: Կաթոլիկություն ընդունած հայերի լեհացման գործընթացը սկսեց արագանալ հատկապես 17-րդ դարի կեսերից, երբ Վատիկանը հանձն առավ զբաղվել հայ նորադարձ կաթոլիկների կրթական խնդիրներով. Լեհաստան են ուղարկվում իտալացի վանականներ, որոնք հայերի համար ստեղծում են դպրոցներ, համայնքի անդամներից ընտրում նոր սերնդի ապագա հոգեւորականներին:

Սակայն պետք է ասել, որ դավանափոխությունը միանշանակորեն չզնահատվեց լեհահայերի կողմից. շատերն արտագաղթեցին Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա: Նախկին ծաղկուն գաղութը դավանափոխության, ինչպես նաեւ Ռեչ Պոսպոլիտայի տնտեսական եւ քաղաքական անկման պատճառով սկսեց նոսրանալ, իսկ շատերն էլ, ընդունելով կաթոլիկություն, հեռացան ազգային արմատներից, մոռացան մայրենի լեզուն: Աստիճանաբար փակվեցին նաեւ հայկական դպրոցները, ինչը եւս հայերի

լեհացմանն ուղղված քաղաքականությանը նպաստող գործոն էր: Կաթոլիկացումից հետո գրեթե ամբողջությամբ մոռացվեց, կիրառությունից դուրս եկավ առանց այդ էլ սահմանափակ անձանց կողմից կիրառվող հայերենը, որը մնաց միայն որպես եկեղեցական ծիսակատարության լեզու:

Չետագոտող Վ.Կիրակոսյանը, «Մի էջ լեհահայոց հոգեւոր կյանքի պատմությունից» հոդվածում անդրադառնալով լեհահայերի վաղ անցյալին եւ մեջբերելով Ֆ.Ջախարիաշեւիչին՝ Լեհաստանում հայոց լեզվի անհետացման, հայերի դավանափոխության վերաբերյալ, գրում է. *«Խզելով կապերը էջմիածնի հետ՝ այստեղի հոգեւորականները Չայաստանի հետ հայերեն լեզվով գրագրության կարիք այլեւս չէին զգում եւ չէին ստանում էջմիածնի կաթողիկոսի որոշումները: Թորոսովիչը իր կարգադրությունները, կարծեմ, անում էր լեհերենով: Իսկ հայերին ստիպում էին միանալ լատինական կաստյոլին, եւ ժողովուրդը հաճախում էր այդ կաստյոլները՝ ավելի շուտ սովորելով տեղական լեզուն եւ մոռանալով իր լեզուն... Այսպիսով, հայերենի օգտագործումը դադարեցվեց, եւ այդ լեզուն գրեթե լիովին անհետացավ»:*

Լեհացման գործընթացներն աստիճանաբար արագանում էին: Չատկապես Լվովի հայ կաթոլիկների թվաքանակը նվազեց եւ հասավ 100 ընտանիքի, շատերն արդեն իրենց հայկական ծագմամբ լեհ էին համարում:

Թեեւ ժամանակ առ ժամանակ լեհահայ քաղաքային համայնքներն աշխուժանում էին, բայց այդ աշխուժությունը զարմանալիորեն արագ կերպով մարում էր: 19-րդ դարավերջին եւ մինչեւ Երկրորդ աշխարհամարտը որոշ քաղաքներում հայկական ծագումով կաթոլիկների մեջ նկատվում է ազգային զարթոնքի նոր բռնկում, որի նախաձեռնողներն էին մի շարք կրոնական գործիչներ: Սակայն այս գործընթացն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատճառով, որը մեծ հարված հասցրեց աշխուժացման նոր փուլում գտնվող լեհահայերի ճակատագրին:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին բազմաթիվ լեհահայեր արժանացան լեհերի ճակատագրին՝ բռնի տեղահանման ենթարկվելով: Գաղթի ճանապարհին շատերը սպանվեցին կամ կորցրին իրենց ունեցվածքը: 1939թ., երբ Լեհաստանի արեւելյան հատվածն անցավ ԽՍՀՄ-ին, կաթոլիկ հայերը տեղափոխվեցին Լեհաստանի արեւմուտք՝ հաստատվելով Վարշավայում, Գլիվիցիում, Օբորնի Շլոնսկում, Օլավայում, Գդանսկում, Կրակովում եւ այլուր: Բավական հետաքրքիր փաստ է, որ գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում Լեհաստանի տարածքում բնակվող բազմաթիվ հրեաներ, դիմելով հայ կաթոլիկ քահանաներին,

հնարավորություն են ունեցել ընդունել հայկական անուն-ազգանուններ եւ այդպիսով փրկվել:

1940թ., երբ Լվովի հայ կաթոլիկ մետրոպոլիան հայտնվեց խորհրդային բանակի վերահսկողության տակ, եկեղեցու հետեւորդ հայերի գրեթե կեսը՝ 2500 մարդ, աքսորվեց Սիբիր: Նրանց ղեկավար հայր Դիոնիսի Կաետանովիչը ձերբակալվեց եւ մահկանացուն կնքեց աքսորում 1954թ.: Լվով, Իվանո-Ֆրանկովսկ, Տիսմենիցա, Լիսեցի Սնյատին, Բերեժանի, Գորոդենկա, Կուտի քաղաքների Հայ Կաթողիկե եկեղեցիների գույքի մեծ մասն ազգայնացվեց: Պատերազմից հետո լեհահայության ուժացման միտումներն ավելի սաստկացան: Այս գործընթացները համեմատաբար դանդաղեցին 1950-ականների վերջին, երբ լեհահայ կաթոլիկների համար ստեղծվեց Հյուսիսային թեմը (կենտրոնը՝ Գդանսկ), 1980-ական թթ. Հարավային թեմը (կենտրոնը՝ Գլիվիցի), որոնք էլ դարձան լեհահայությանը համախմբող կենտրոններ:

### **Հայ կաթոլիկները կամ «հին համայնքը»**

Այսօր լեհահայերի հին սերունդը Հայ Կաթողիկե եկեղեցու անդամներ են եւ հաշվվում են մոտ 8-15 հազար (ոչ պաշտոնական տվյալներով): Դավանափոխ հայերի այս սերունդներն իրենց հիմնականում համարում են «հայկական ծագումով լեհեր» կամ «Լեհաստանի՝ հայկական արմատներ ունեցող հայեր»:

1980-ականները լեհահայերի համար նշանավոր էին այնքանով, որ կարողացան Կրակովում կազմակերպել մի նստաշրջան, որից հետո ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում առաջարկություն արվեց անդամակցել լեհական ազգագրական ընկերությանը՝ ստեղծել Հայ մշակույթով հետաքրքրվողների ընկերություն: Ընկերությունը ոչ պաշտոնապես վերածվեց լեհահայերի միության: Առաջին նիստը, որը տեղի ունեցավ նոյեմբերին, իսկական «հեղափոխություն» էր լեհահայերի կյանքում, որով կրկին վերածնվեց համայնքի ընդհատված կյանքը: Նման հասարակական կազմակերպություններ ստեղծվեցին նաեւ Պոզնանի եւ Վարշավայի հայ կաթոլիկ համայնքներում:

Հին հայերի պատմական եւ մշակութային ժառանգության, հավաքական հիշողության վերականգնման համար արդեն երեք տարի Վարշավայում լույս է տեսնում «Լեհահայոց ընտանիքներն անցյալի նկարներում» օրացույցը: Հատկանշական է, որ այս իրադարձությունից հետո Լեհաստանում սկսեցին ստեղծվել հին սերնդին միավորող կազմակերպություններ: Նշենք, որ օրացույցը լույս է տեսնում հայերեն եւ լեհերեն,



բաժանվում նրանց, ովքեր հետաքրքրվում են իրենց արմատներով: Համաձայն օրացույցի, այսօր բազմաթիվ լեհեր, ի զարմանս իրենց, պարզում են իրենց գեներում առկա հայկական անցյալի հետքեր, սկսում են անկախ հետազոտություններ կատարել՝ պարզելու իրենց ծագումը, փնտրում են լեհահայ այլ ազգականների, առհասարակ հետաքրքրվում են իրենց ընտանիքի պատմությամբ:

Լեհահայերի կյանքում բավական ազդեցիկ էր նաեւ ժամանակակից փուլում հայերի արտագաղթը Հայաստանից Լեհաստան 1990–1996թթ.:

Լեհ ուսումնասիրող Մաչեյ Ջոնբեկը, որը խորամուխ է եղել Լեհաստանի հին եւ նոր հայերի ներկայիս փոխհարաբերությունների հարցում, նշում է. «Լեհաստանում նրանք ցանկանում են ընդունված լինել որպես ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ (հին համայնքը-Ա.Ս.): Նրանց առաջնորդները Լեհաստանում հայերի պատմության եւ մշակույթի տարածման գործում մեծ ներդրում ունեն եւ կապեր են հաստատում Հայաստանից վերջին ժամանակաշրջանում տեղափոխված հայերի հետ: Դա նկատվում է համատեղ կազմակերպված հավաքությունների ժամանակ, բիզնես համագործակցության, ինչպես նաեւ նոր ներգաղթածների երեխաների համար կիրակնօրյա դպրոցների ստեղծման մեջ: Հաճախ նաեւ իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանից արտագաղթածներին, որոնք Լեհաստանում իրենց բնակությունն օրինականացնելու խնդիրներ ունեն: Նոր արտագաղթը հին համայնքի հայերի կողմից ընդունվում է որպես իրենց հայեցիությունը վերականգնելու եւ համայնքն աշխուժացնելու գործոն»:

Լեհահայերի ժամանակակից փուլի մասին բավական ուշագրավ դիտարկումներ է արել նաեւ Իվոնա Կալիշեւսկայան: «Հին համայնքի ներկայացուցիչները, որոնք հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ են, հայերեն չգիտեն եւ հաճախ իրենց անվանում են հայկական ծագմամբ լեհեր: Նրանք նոր գաղթած հայերի աչքին պակաս հայկական են թվում: Եկածներն իրենց հերթին հին համայնքի հայերի կողմից համարվում էին չափից ավելի հասարակ, որոնք չեն համապատասխանում հայի մասին իրենց պատկերացմանը: Մյուս կողմից՝ նոր եկածները հետաքրքրություն առաջացրին լեհահայերի շրջանում, լեհահայերը նրանցից իմացան ժամանակակից Հայաստանի փաստացի իրավիճակի եւ երկրի առջեւ ծառայած խնդիրների մասին: Դա օգնեց նրանց ավելի լավ հասկանալ գաղթի պատճառները: Նախկին համայնքի անդամները նոր եկածներին օգնեցին փաստաթղթային հարցերում, ինչպես նաեւ աշխատանք գտնելու մեջ եւ բիզնեսի բնագավառում: Երկու տարբեր աշխարհների՝ Հայաստանից եկած հայերի եւ հայկական

*ծագում ունեցող լեհերի հանդիպումը հաճախ հիասթափություն էր առաջացնում»:* Հին համայնքը նաեւ անհանգստացած էր 90-ական թվականներին եկածների ոչ այնքան դրական վարքով, ինչը կապված էր հանցագործությունների հետ: Նրանք այսպես էին արտահայտվում այդ կապակցությամբ. *«Նրանք մեր մասին լեհերի ունեցած վերաբերմունքը փչացնում են»:*

Հին համայնքի հետ ավելի մերձավոր կապեր են ունեցել հատկապես 90-ականներին եկածները: Ավելի ուշ եկածները հույսը հիմնականում դրել են ավելի վաղ եկած հայրենակիցների վրա, որոնք նրանց մտքերը են լեհական հասարակության կյանքի «գաղտնիքների» մեջ: Հին համայնքի հետ վերջիններիս կապն իրականանում է մշակութային միջոցառումներին եւ Հայ Կաթոլիկ եկեղեցու արարողություններին մասնակցելու միջոցով: Հին համայնքի ներկայացուցիչները, եթե նույնիսկ անմիջականորեն չեն օգնել, ապա նրանց հանդեպ դրսևորել են բարյացակամ վերաբերմունք՝ գտնելով, որ հայերին պետք է օգնել իրավական դաշտում, գաղթականների իրավունքների եւ կրթության հարցերում:

Պատահական չէ, որ լեհահայ կաթոլիկների անցյալ եւ ներկա խնդիրների լուսաբանման նպատակով ստեղծվել են հասարակական, գիտական հիմնադրամներ եւ կենտրոններ, որոնք նպատակային աշխատանք են տանում նրանց շրջանում, հիշեցնում նրանց ներդրումը Լեհաստանի պետական եւ հասարակական կյանքում: Հիշատակման է արժանի հատկապես Լեհահայոց մշակույթի եւ ժառանգության հիմնարկությունը, որը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում հին եւ նոր համայնքի կյանքում տեղի ունեցող իրադարձությունները: Ընդ որում, այս հիմնադրամը հովանավորվում է կարդինալ Յուզեֆ Գլենպի կողմից:

Հարկ է, նշել որ հայ կաթոլիկների համախմբման գործում զգալի ավանդ են բերում տարբեր քաղաքներում գործող կաթոլիկ ծխական համայնքների հոգեւորականները: Մասնավորապես, Լեհաստանում հայկական կաթոլիկ առաջնորդ, կարդինալ Յուզեֆ Գլենպն այն եզակի հոգեւորականներից է, ում շուրջն են համախմբվել Վարշավայի, Կրակովի եւ Գդանսկի հայ կաթոլիկներն ու նրանց հոգեւոր հովիվները: Ավելորդ չէ նշել, որ կարդինալի շնորհիվ բազում հայկական հին ձեռագրեր են փրկվել, եւ ինչպես շատերն են նշում՝ նա մեծ ներդրում ունի Լեհաստանում հին հայկական մշակույթի պահպանման գործում: Հետաքրքիր է, որ տարբեր քաղաքներում բնակվող հայ կաթոլիկներին սպասարկող հոգեւորականների թվում են ինչպես հայեր, այնպես էլ հայկական ծագում ունեցող լեհեր, օտարազգիներ:

Խիստ հատկանշական է, որ «հին» ու «նոր» համայնքը Լեհաստանում ազգային փոքրամասնություն է եւ ոչ կրոնական՝ բաժանված առաքելականների ու կաթոլիկների: Այս հանգամանքը նպաստում է երկու շերտերի համակեցությանը: Լեհաստանի հայկական կազմակերպությունների դաշնության ղեկավար Մաչեյ Բոգոսեւիչը, որը սերում է «հին» հայերից, հարցազրույցներից մեկում նշում է, որ իրենց հաջողվել է Լեհաստանում ծավալել լոբբիստական գործունեություն՝ կապված Հայոց ցեղասպանության հետ. *«Հայոց մեծ եղեռնի 90-ամյակի կապակցությամբ 5 օր շարունակ մեզ հաջողվեց լեհական սեյմում 1915թ. առնչվող վավերագրական ֆիլմեր ցուցադրել, կատարել նաեւ որոշակի քարոզչական աշխատանք: Սա մեծ իրադարձություն էր, որի շնորհիվ ողջ հայությունը՝ «հին» ու «նոր» համայնքներից, հանդես եկավ միասնական կեցվածքով, այստեղ հասկացան, որ մեր տեսակետներն այս առնչությամբ ընդհանրական են: «Հին» հայերի մեծամասնությունը չի կրել ցեղասպանության արհավիրքները, սակայն ես գտնում եմ, որ սա ընդհանուրիս է վերաբերում»:*

Այսպիսով, կարելի է փաստել, որ երկու հայկական շերտերի սերտ շփումները հեռանկարային են եւ նպաստավոր «ժառանգական հիշողության» վերականգնման համար:

**«ԱՂՐԲԵՋԱՆ. ԽՈՑԵԼԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ»**  
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ ԶԵԿՈՒՅՑԸ**  
*Կարեն Վերանյան*

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրատարակվող տարեկան վարկանիշային հետազոտությունները բազմիցս փաստել են, որ պետության եւ հասարակության գործունեության տարբեր ոլորտներում Ադրբեջանին տրվող վարկանիշային միավորները բավական ցածր են: Այս համատեքստում բացառություն չէ նաեւ Միջազգային ճգնաժամային խմբի ս.թ. սեպտեմբերի 3-ին հրապարակած հերթական զեկույցը՝ «Ադրբեջան. խոցելի կայունություն» խորհրդանշական վերնագրով:

Ձեկույցն ընդգրկում է Ադրբեջանում կրտսեր Ալիեւի նախագահության ողջ ժամանակաշրջանը (2003թ. հոկտեմբերից սկսած)՝ անդրադառնալով վարչակարգի քաղաքական դիմագծին, իշխող վերնախավում տիրող մրցակցությանը, ժողովրդավարացման գործընթացներին եւն: Այն բաղկացած է վեց բաժնից եւ ամփոփագրից, որում տրված են Ադրբեջանի իշխանություններին հասցեագրված փորձագիտական խորհրդատվություններ:

Ձեկույցի փորձագետների գնահատմամբ, Իլիամ Ալիեւը առնվազն կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարի համար կարողացել է համախմբել իշխանությունը եւ կայունություն ապահովել Ադրբեջանում, սակայն իշխանական համակարգի հովանավորչական բնույթը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում կայունությունը խոցելի է՝ պայմանավորված վերնախավի կլանային մրցակցությամբ: Միաժամանակ, երկրի խիստ «նավթահեն» տնտեսության զարգացումն ուժեղացնում է առկա ռիսկերը. մասնավորաբար՝ երբ նախատեսվող եկամուտները պակասեն, դա կհանգեցնի Ադրբեջանի ողջ տնտեսության անկմանը: Երկրի կայունության խոցելիության կարելուր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հերթական ընտրություններն ավարտվել են գործադիր իշխանության ձեռքում իշխանության առավել կենտրոնացմամբ, իսկ քաղաքացիական ու քաղաքական ազատություններն արմատապես ոտնահարվել են: Արդյունքում՝ Ադրբեջանը, ըստ փորձագետների վերլուծության, կիսաավտորիտար համակարգից վեր է ածվել լիարժեք ավտորիտար պետության:

Ի դեպ, փորձագետները համակարծիք են, որ երկրում 2010թ. նոյեմբերին նախատեսվող խորհրդարանական ընտրությունները բացառություն չեն լինելու:

Ձեկույցում խոսվում է Իլիամ Ալիեւի կողմից իշխանության համախմբման, իշխանության անձնավորման, ինչպես նաեւ վերնախավի կլանային համակարգում ընթացող գործընթացների մասին: Ինչպես նշում են փորձագետները, անցնելով իշխանության՝ կրտսեր Ալիեւը հստակ գիտակցում էր, որ իր իշխանությանը նետված մարտահրավերները գլխավորապես գալիս են ոչ թե թույլ ընդդիմադիր դաշտից, այլ իշխող վերնախավից: Խնդիրն այն է, նշում են փորձագետները, որ Յեյդար Ալիեւի մահվանից հետո ազատ արձակվեցին վերջինիս վարչակարգի փորձառու անդամներից շատերի ձեռքերը, որոնք չհապաղեցին վերահսկել անփորձ եւ երիտասարդ Ալիեւին: Նրանցից առանձնանում էին հատկապես նախագահի հորեղբայր Ջալալ Ալիեւն ու նրա մտերիմներից՝ Ալի Ինսանովը: Ի դեպ, վերջինս առողջապահության նախարարն էր, ազդեցիկ «Երագի» կլանի («Երեւանյան ադրբեջանցիներ») ղեկավարը: Իշխանական կլանների զսպման նպատակով Ալիեւը սկսեց փնտրել վստահելի դաշնակիցների, որոնց թվում էր Ռամիզ Մեհթեւեւը. վերջինս Յեյդար Ալիեւի ամենաազդեցիկ թիմակիցներից էր եւ ժամանակին ղեկավարում էր նրա նախագահական աշխատակազմը: Մեհթեւեւն այն փորձառու քաղաքական գործիչն էր, որը կարող էր հակազդել Ջալալ Ալիեւի ու Ինսանովի ազդեցությանը:

Չամաձայն փորձագիտական տեսակետի, իշխանական սուր պայքար էր սկսվել նաեւ վերնախավի այլ երկու երիտասարդ անդամների՝ Մաքսային կոմիտեի նախկին ղեկավար Քեմալադդին Յեյդարովի (նախագահի թիմակից, ներկայում զբաղեցնում է երկրի արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնը) եւ տնտեսական զարգացման նախկին նախարար Ֆարիադ Ալիեւի միջեւ, ինչը կարող էր սպառնալ վարչակարգի կայունությանը: Դեպքերի նման զարգացումը կանխելու նպատակով Ալիեւը դիմեց կտրուկ միջոցների. կաշառակերության մեղադրանքով ձերբակալվեցին Ինսանովն ու Ֆարիադ Ալիեւը:

2005թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններից անմիջապես հետո Ալիեւն սկսեց քաղաքական վերադասավորումները: Նա խորհրդարանական ղեկավարությունից հեռացրեց Ջալալ Ալիեւի ու Ինսանովի կլանին հարող օրենսդիրներին, ինչին հաջորդեցին նախարարների ու տեղական ինքնակառավարման իշխանությունների զտումները: Դա հնարավորություն տվեց Ալիեւին առանցքային պաշտոններում նշանակումներ կատարել իր թիմակիցներից:

Ձեկույցում նշվում է, որ Ալիեն ավելի քիչ հիմնվեց տեղական կլանների վրա, քան հայրը: «Երազի» կլանի առաջնորդ Ինսանովի ձերբակալությունը խորհրդանշեց Ադրբեջանի քաղաքականությունում տեղական կլանների՝ որպես ազդեցության գործոնների ավարտը: Չնայած նախիջեւանյան, իսկ ավելի քիչ՝ նաեւ «Երազի» կլանները շարունակեցին ստանձնել բարձր պաշտոններ, սակայն վերջիններիս անձնական լոյալությունը նախագահին դարձավ առավել ընդգծված: Փորձագետները նկատում են, որ ի տարբերություն Յեյդար Ալիեւի, կրտսեր Ալիեւը նախընտրեց իր թիմում տեսնել քաղաքային, Բաքվում աչքի ընկած անհատների, իսկ հաճախ՝ հաջողակ գործարարների:

2008թ. հոկտեմբերի նախագահական ընտրություններին Ալիեւը ձայների ճնշող մեծամասնությամբ պահպանեց նախագահական աթոռը, չնայած ընդդիմության մեղադրանքներին՝ ընտրությունների կեղծման առումով: Ի տարբերություն 2005թ. ընտրությունների, այս ընտրարշավում, համաձայն փորձագետների տեսակետի, տեղի չունեցավ ընդդիմության որեւէ լուրջ հասարակական բողոք: Արդյունքում՝ Ալիեւը կարողացավ ամրապնդել իր եւ թիմակիցների դիրքերը:

Ձեկույցում նշվում է, որ իշխող կուսակցությունն ընտրություններից անմիջապես հետո անցավ սահմանադրական փոփոխություններին, ըստ որոնց՝ վերացվում էր հաջորդաբար երկու անգամ նախագահ վերընտրվելու սահմանափակումը եւ հնարավորություն էր ընձեռվում անորոշ ժամանակով հետաձգել ընթացիկ նախագահական ու խորհրդարանական ընտրությունները: Այդ փոփոխություններն ընդունվեցին 2009թ. մարտին հապճեպ կազմակերպված հանրաքվեի արդյունքում: Փորձագետների կարծիքով, պատահական չէին ընդդիմադիր դաշտում խորացող արձագանքները, որ Ալիեւը երկիրը տանում է միապետության, իսկ նրանցից ոմանք էլ կրտսեր Ալիեւին անվանում էին «շահ»: Եվրահանձնաժողովը նույնպես բավական բացասաբար արձագանքեց այդ սահմանադրական փոփոխություններին՝ որակելով դրանք որպես «ժողովրդավարության զարգացման համար լուրջ հետընթաց»:

Ձեկույցում ասվում է, որ կառավարությունը կրում է նեոֆեոդալական բնույթ, երբ երկրի նախագահը բաշխում է տնտեսության եկամտաբեր ճյուղերից ստացված եկամուտները, թույլ տալիս իր թիմակիցներին հավաքագրել ոչ ֆորմալ գումարներ եւ նույնիսկ վերահսկել տվյալ շրջանը: Իշխանական համակարգը գործում է վերելից ներքեւ սկզբունքով: Վերնախավն իր շուրջ ստեղծում է նման հովանավորչական ցանցեր՝ առանցքային պաշտոններում նշանակելով իր թիմակիցներին ու ազգականներին: Նախագահը հանդես է գալիս ոչ միայն որպես

իշխանության եւ եկամուտների բաշխող, այլեւ՝ հարցեր կարգավորող: Փորձագիտական գնահատականների համաձայն, մի կողմից՝ նա համակարգը պահում է միասնական՝ հանդես գալով որպես հաշտարար վերնախավի անդամների միջեւ մրցակցությունում, մյուս կողմից՝ կիրառում է «բաժանիր, որ տիրես» սկզբունքը՝ միանձնյա իշխելու նպատակով: Արդյունքում՝ ըստ էության, Իլիամ Ալիեւի թիմից որեւէ անդամ հայտնի չէ, սակայն դրա հետ մեկտեղ Ալիեւի իշխանությունը կախյալ վիճակում է իր թիմակիցներից:

Ինչպես նշվում է զեկույցում, իշխանական համակարգում շարունակում է ազդեցությունը պահպանել Ռամիզ Մեհթեւի կլանը, որն, ըստ զեկույցի փորձագետների, համարվում է ամենակոնսոլիդացված ուժը վերնախավում: Պատահական չէ, որ ընդդիմությունում Մեհթեւը հայտնի է որպես «գորշ կարդինալ»: Որպես երկրի պետական քաղաքաշինության հանձնաժողովի նախագահ, վերջինս քաղաքացիական ծառայության ոլորտում գրեթե բոլոր նշանակումների հարցում առանցքային որոշում ընդունող ուժն է, ներառյալ՝ օրենսդիր ու դատական բնագավառները: Բացի այդ, նա ղեկավարում է հակակոռուպցիոն հանձնաժողովը:

Իշխող վերնախավում երկրորդ խոշոր կենտրոնն օլիգարխներն են, որոնք հիմնականում նախարարներ են եւ վայելում են նախագահի աջակցությունը՝ պայմանավորված բիզնեսի համատեղ շահերով: Եթե Մեհթեւի կլանը վերահսկում է պետության վարչական ռեսուրսների զգալի հատվածը, «օլիգարխների» կլանը ղեկավարում է երկրի ֆինանսական ու տնտեսական սեկտորը:

Փորձագետները նշում են, որ երկրի վերնախավում երրորդ ազդեցիկ կենտրոնը նախագահի ընտանիքն է, որտեղ առանցքային դեր են կատարում նախագահի հորեղբայրը՝ Ջալալ Ալիեւը եւ նրա քույրը՝ Սելիլ Ալիեւան: Վերջիններս, ըստ էության, մարգինալացված են, որովհետեւ ժամանակին կասկածի տակ էին դրել Իլիամ Ալիեւի իշխանությունը: «Ընտանիքի» կլանի «ռեֆորմիստական» ճյուղն առաջնորդում է երկրի առաջին տիկին Մեհրիբան Ալիեւան. այն բաղկացած է վերջինիս ազգականներից ու թիմակիցներից:

Ջեկույցի փորձագետները եզրակացնում են, որ Ադրբեջանում Իլիամ Ալիեւի կողմից իշխանության կոնսոլիդացումը, ընդդիմության նկատմամբ իշխանական ճնշումներն ու ժողովրդավարացման գործընթացների սահմանափակումներն էական սպառնալիք են երկրի կայունությանը: Ադրբեջանում նման սցենարի զարգացումից խուսափելու նպատակով փորձագետները հանդես են գալիս երկրի իշխանություններին ուղղված խորհուրդների փաթեթով՝

1. հանրահավաքների իրական ազատ կազմակերպման, խոսքի ազատության հնարավորության ընձեռում քաղաքացիներին,
2. ընդդիմության հետ իրական երկխոսության նախաձեռնում, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ ընդդիմադիր տեսակետների հնչեցման հնարավորության ընձեռում,
3. քաղբանտարկյալների ազատ արձակում,
4. «BBC»-ի ադրբեջանական ծառայության եւ «Ամերիկայի ձայնի» հեռարձակումների վերականգնում,
5. ՀԿ-երի գրանցման գործընթացի հեշտացում,
6. կրոնական հողի վրա առաջացած հասարակական կրքերի հանդարտեցում՝ թույլ տալով վերաբացել վերջերս փակված մզկիթները,
7. կառավարության գործունեությունում թափանցիկության ու պատասխանատվության խթանում,
8. կայուն եւ դիվերսիֆիկացված, շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսության ձեւավորում:



**ԹՈՒՐՔԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԶԵՏՈ  
*Արտաշես Տեր-Չարությունյան***

Սեպտեմբերի 12-ին Թուրքիայում կայացավ իշխող Ազատություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ, թուրք.՝ AKP) կողմից առաջարկված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն: Չնայած ԱԶԿ-ին ընդդիմադիր երկու ուժերն էլ՝ քեմալիստական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ, թուրք.՝ CHP) եւ Ազգայնական շարժում կուսակցությունը (ԱՇԿ, թուրք.՝ MHP), բանակի ղեկավարության երբեմն անթաքույց աջակցությամբ դեմ էին այդ փոփոխություններին, սակայն վարչապետ Էրդողանի թիմակիցները կարողացան բարեհաջող կերպով անցկացնել հանրաքվեն եւ ստանալ քվեարկողների ձայների մեծամասնությունը<sup>1</sup>:

Հասկանալի է, որ ԱԶԿ-ի կողմից առաջարկված սահմանադրական փոփոխությունները վերջին տարիներին Թուրքիայում իշխող քաղաքական ուժի եւ երկիրը տասնամյակներ ղեկավարած, իսկ այսօր ընդդիմադիր քեմալիստների միջեւ ընթացող պայքարի դրսեւորումներից էին: Բայց նման արդյունքով հանրաքվեն, իրականում, պետք է համեմատել 2002թ. խորհրդարանական ընտրությունների հետ, երբ շուրջ քառորդ դար տեւած պայքարից հետո իսլամական ուղղվածության քաղաքական ուժը կարողացավ գալ իշխանության: Շատ դիտորդներ այն կարծիքին են, որ եթե 2002թ. ընտրությունները հիմնարար փոփոխություններ առաջացրին Թուրքիայի քաղաքական դաշտում՝ ներգործելով այդ երկրում տասնամյակներ գոյություն ունեցած որոշումների կայացման մեխանիզմի ու քաղաքական-տնտեսական շրջանակների միջեւ առկա ուժերի փոխդասավորվածության վրա, ապա այս հանրաքվեի արդյունքները կարող են այդ փոփոխությունները տանել ավելի արմատական ուղղությամբ՝ Թուրքիայի պատմության մեջ բացելով նոր էջ:

**Սահմանադրական փոփոխությունները**

Դեռ գարնանը Թուրքիայի խորհրդարանում մեծամասնություն ունեցող ԱԶԿ-ն<sup>2</sup> ներկայացրեց սահմանադրական փոփոխությունների մի փաթեթ: Օրենսդիր մարմնով փաթեթն անցկացնելու եւ օրենքի ուժ տալու

համար անհրաժեշտ էր խորհրդարանի պատգամավորների ծայրերի 2/3-րդը՝ 367 քվե: Քվեարկության ժամանակ ԱԶԿ-ն չկարողացավ այդքան ծայր հավաքել, սակայն ստացած 336 ծայրը բավարար էր<sup>3</sup>, որպեսզի փաթեթը ներկայացվի հանրաքվեի՝ նախագահ Աբդուլա Գյուլի կողմից այն ստորագրելուց 60 օր անց<sup>4</sup>:

Հանրաքվեին ԱԶԿ-ն ներկայացրել էր Թուրքիայի սահմանադրության ընդհանուր թվով 26 հոդվածների փոփոխության վերաբերյալ առաջարկություն: Բոլոր փոփոխություններին մենք այստեղ չենք անդրադառնա: Կառանձնացնենք միայն նրանք, որոնք կարելու են Թուրքիայի ներքաղաքական զարգացումների տեսանկյունից:

Ամենակարևոր փոփոխությունը, թերեւս, այն է, որ հետայսու եթե երկրի Սահմանադրական դատարանի (ՍԴ) կողմից քաղաքական որեւէ կուսակցություն փակվի, ապա այդ կուսակցության պատգամավորները շարունակելու են պաշտոնավարել խորհրդարանում՝ մինչև իրենց լիազորությունների ավարտը, այսինքն՝ մինչև նոր ընտրություններ:

Այս փոփոխությունը շատ կարևոր հաջողություն է ԱԶԿ-ի համար, որովհետև քեմալիստների ազդեցության ներքո գտնվող Սահմանադրական դատարանի<sup>5</sup> այդ իրավասությունը լուրջ զեքն էր նրանց՝ ԱԶԿ հակառակորդների ձեռքին: Ոչ հեռու անցյալում՝ 2008թ., ԱԶԿ-ն մի անգամ արդեն կանգնել էր փակվելու (հետեւաբար՝ խորհրդարանում իր պատգամավորական տեղերից զրկվելու) վտանգի առջև, երբ առաջարկում էր վերացնել պետական հաստատություններում կանանց գլխաշոր կրելու արգելքը: Այն ժամանակ ԱԶԿ-ն կարողացավ խույս տալ ՍԴ-ի կողմից փակվելու վտանգից՝ գլխաշորերի արգելքի վերացման վերաբերյալ իր պահանջից հրաժարվելու գնով<sup>6</sup>: Այստեղ ավելորդ չէ նշել, որ ԱԶԿ-ի «հայր» կուսակցությունները երկրի ՍԴ-ի կողմից փակվել են հենց Թուրքիայի աշխարհիկ բնույթին սպառնալու մեղադրանքով՝ 1980թ. Milli Selamet Partisi-ին, 1998թ. Refah Partisi-ին եւ 2001թ. Fazilet Partisi-ին:

Բացի այդ, փոփոխված սահմանադրությամբ ՍԴ-ն ընդլայնվեց՝ 11-ից դառնալով 17, եւ եթե նախկինում սահմանադրական դատարանի անդամներին նշանակում էր միայն երկրի նախագահը, ապա նոր դատարանում նախագահը նշանակելու է անդամներից 14-ին, իսկ մնացած 3-ին ընտրելու է խորհրդարանը: Այսուհետև ՍԴ անդամները նշանակվելու են 12 տարով, ու 65 տարեկան դառնալուն պես պետք է պաշտոնաթող լինեն: Միեւնույն ժամանակ, եթե նախկինում որեւէ քաղաքական կուսակցություն փակվելու համար անհրաժեշտ էր ՍԴ անդամների 3/5-ի, ապա այժմ պետք է 2/3-ի համաձայնությունը (այսինքն՝ ավելի է բարդացվել):

Հասկանալի է, որ ՍԴ կազմի ընդլայնումն ուղղակի հնարավորություն կտա ԱԶԿ-ին երկրի դատական բարձրագույն ատյանում ընդլայնել իր ազդեցությունը, քանի որ, ինչպես հայտնի է, երկրի նախագահը ԱԶԿ-ից է, իսկ խորհրդարանում կուսակցությունը մեծամասնություն ունի:

Երկրի դատական համակարգում ԱԶԿ ազդեցությունն ընդլայնող հաջորդ սահմանադրական փոփոխությունը վերաբերում է Դատավորների ու դատախազների բարձրագույն խորհրդին (ԴԴԲԽ, թուրք.՝ HSYK): Թուրքիայի դատական համակարգում խորհրդի դերակատարությունը կարելուովում է նրանով, որ վերջինս է նշանակում ու ազատում երկրի առաջին ատյանի դատարաններից բարձր գտնվող դատարանների դատավորներին ու դատախազներին եւ վերահսկում է առաջին ատյանի դատարանների գործունեությունը: Մինչեւ սահմանադրական փոփոխությունը, խորհրդի 7 հոգանոց կազմը բաղկացած էր երկրի արդարադատության նախարարից (ով միաժամանակ հանդիսանում է խորհրդի ղեկավարը), արդարադատության փոխնախարարից, 3 անդամները նշանակվում էին Վճռաբեկ բարձրագույն դատարանի (թուրք.՝ Yargitay), իսկ մնացած 2-ն էլ՝ Պետական խորհրդի (վարչական բարձրագույն դատարան, թուրք.՝ Danistay) կողմից:

Սահմանադրական փոփոխությամբ ԴԴԲԽ-ն նախ ընդլայնվեց՝ 7-ից դառնալով 22: Այսուհետեւ նոր 15 անդամներից 4-ին նշանակելու է երկրի նախագահը, իսկ մնացած 11-ն ընտրվելու են մոտ 13 հազար դատավորների ու դատախազների կողմից: Բացի այդ, ԴԴԲԽ-ի կողմից պաշտոնանկ արված դատավորները կամ դատախազները այլեւս կարող են դատական կարգով վիճարկել խորհրդի նման որոշումները, ինչը նախկինում չկար:

Երդողանի ղեկավարած քաղաքական ուժի համար այստեղ առավելությունն այն է, որ ի տարբերություն դատական բարձրագույն ատյանների, ցածր ատյաններում, որոնց ներկայացուցիչները, բնականաբար, մեծ թիվ են կազմում երկրի դատավորների ու դատախազների շարքում, ավելի շատ են ներկայացված ԱԶԿ կողմնակիցները կամ իսլամական ավանդույթների նկատմամբ համեմատաբար ավելի լոյալ կեցվածք ունեցող մարդիկ: Հետեւաբար, ԴԴԲԽ 11 անդամների ընտրություններում ԱԶԿ-ն կարող է լուրջ հույսեր ունենալ:

Հանրաքվեով հավանություն ստացած ԱԶԿ սահմանադրական փոփոխությունների հաջորդ կարելուր հատվածն առնչվում է զինվորականներին: Նախ վերացվեց սահմանադրորեն ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ արգելվում է դատական հետապնդման ենթարկել այն զինվորականներին, որոնք իրականացրել էին 1980թ. պետական հեղաշրջումը<sup>7</sup>:

Երկրորդ՝ Ռազմական բարձրագույն խորհրդի (ՌԲԽ, թուրք.՝ YAS) որոշումները, որոնք վերաբերում են Թուրքիայի զինված ուժերի զինվորականների պաշտոնանկությանը, հետայսու կարող են դատական կարգով վիճարկվել այդ զինվորականների կողմից: Նախկինում ՌԲԽ նման որոշումները վերջնական էին, ինչը շոշափելի առավելություն էր տալիս բարձրագույն զինվորականությանը՝ զինված ուժերում սեփական ազդեցությունը պահելու եւ հետեւաբար՝ ներքաղաքական կյանքում ավելի վճռական հանդես գալու գործում:

Եվ վերջապես, սահմանադրական փոփոխությամբ քաղաքացիական դատարաններն իրավունք են ստանում դատել զինվորականներին: Իսկ ռազմական դատարանները զրկվում են քաղաքացիական անձանց դատելու իրավունքից, բացի ռազմական դրության ժամանակաշրջանից:

Պարզ է, որ ԱԶԿ նախաձեռնած սահմանադրական փոփոխությունների այս հատվածը միտված է թուլացնելու ներքաղաքական պայքարում իր հիմնական հակառակորդ հանդիսացող զինված ուժերի վերնախավին: Զինված ուժերին առնչվող սահմանադրական փոփոխությունները, փաստորեն, 2007թ. հունիսին սկիզբ առած Ergenekon եւ 2010թ. հունվարին մեկնարկած Balyoz (կռան, ռուս.՝ кувалда) պայմանական անունները կրող ու բարձրաստիճան զինվորականների դեմ ուղղված քրեական գործերի տրամաբանական շարունակությունն են<sup>8</sup>:

### **Իրավիճակային գնահատական**

Սեպտեմբերի 12-ի հանրաքվեում ԱԶԿ հաղթանակն իրավական բավական լուրջ մեխանիզմներ է տալիս վերջինիս՝ արագացնելու Թուրքիայի ներքին կյանքում իր կշիռն ու ազդեցությունն ընդլայնելու գործընթացը:

Հանրաքվեի նման արդյունքները ԱԶԿ-ն փորձելու է օգտագործել 2011թ. ամռանը սպասվող խորհրդարանական ընտրությունների ժամանակ շոշափելի հաղթանակ տանելու համար: Այն, շատ դիտորդների գնահատմամբ, կարող է Էրդողանին հնարավորություն տալ ընդհանրապես նոր սահմանադրության առաջարկման համար, որը զինված ուժերը վերջնականապես կդնի կառավարության վերահսկողության ներքո<sup>9</sup>:

Մյուս կողմից, հանրաքվեում ԱԶԿ հակառակորդների՝ բանակ, քեմալիստներ, պարտությունը հարկադրելու է նրանց հրաժարվել տասնամյակներ աշխատած լծակներից: Այդ իմաստով՝ հավանական է, որ առաջիկայում մենք ականատես լինենք վերջիններիս կողմից նոր

մարտավարական քայլերի կիրառմանը ներքաղաքական դաշտում, իսկ դա կրերի թուրքական քաղաքականության համար մի շարք՝ այդ թվում ավանդական հարցերում նոր մոտեցումների ձեւավորմանը:

Միեւնույն ժամանակ, բացառված չէ, որ այսուհետեւ ԱԶԿ-ի նկատմամբ քեմալիստների ու բանակի դիրքորոշումները որոշակիորեն մեղմանան՝ ընդունելով սպասողական վիճակ<sup>10</sup>:

<sup>1</sup> Թուրքիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած տվյալների համաձայն, հանրաքվեին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների (ներկայումս նրանց ընդհանուր թիվն է՝ 38.369.254) 73.71%-ը: Կողմ են քվեարկել 57.88%-ը, դեմ՝ 42.12%-ը:

<sup>2</sup> Ներկայումս թուրքական 550 տեղանոց խորհրդարանում իշխող ԱԶԿ-ն ունի 336 պատգամավոր, ընդդիմադիր ՅԺԿ-ն՝ 97, ԱՇԿ-ն՝ 69, քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցությունը (ԽԺԿ, թուրք.՝ BDP)՝ 12, մնացած տեղերը բաշխված են այլ կուսակցությունների եւ անկախ պատգամավորների միջեւ:

<sup>3</sup> Ցանկացած հարց հանրաքվեի ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ առնվազն 330 պատգամավորի ձայն:

<sup>4</sup> Գյուլը փաթեթը ստորագրեց ս.թ. մայիսի 13-ին:

<sup>5</sup> Ընդհանրապես, Թուրքիայում դատական բարձրագույն ատյանները գտնվում են քեմալիստների ազդեցության ներքո:

<sup>6</sup> 2008թ. փետրվարի 7-ին Թուրքիայի խորհրդարանը 403 կողմ/107 դեմ ձայների հարաբերակցությամբ քվեարկեց պետական հաստատություններում կանանց գլխաշորեր կրելու արգելքի վերացման օգտին, սակայն նույն թվականի հունիսի 5-ին երկրի ՍԴ-ն չեղյալ հայտարարեց այդ որոշումը՝ պետության աշխարհիկ բնույթին վտանգ սպառնալու պատճառաբանությամբ: Ուշագրավ է, որ այն ժամանակ ԱԶԿ-ի հետ օրինագծին կողմ քվեարկեց նաեւ աշխարհիկ համարում ունեցող Ազգայնական շարժում կուսակցությունը (ԱՇԿ)՝ այն հիմնավորմամբ, թե հարցն առնչվում է ոչ թե Թուրքիայի հնարավոր իսլամականացմանը, այլ՝ մարդու իրավունքներին ու ազատությանը:

<sup>7</sup> Թուրքիայի ներկայիս սահմանադրությունն ընդունվել է 1980թ.՝ նույն թվականին պետական հեղաշրջում իրականացրած զինվորականների փաստացի թելադրանքով:

<sup>8</sup> Երկու գործերով էլ Թուրքիայի զինված ուժերի պաշտոնաթող ու գործող բարձրագույն հրամանատարությունը մեղադրվում էր նոր ռազմական հեղաշրջում կազմակերպելու մեջ, ինչի հետեւանքով ԱԶԿ կառավարությունը պետք է տապալվեր: Սակայն ի տարբերություն Ergenekon-ի, Balyoz-ի գործի ժամանակ ի հայտ եկավ Թուրքիայի ներքաղաքական կյանքի համար բավական սկզբունքային մի հանգամանք: Քրեական գործի շրջանակներում ձերբակալվեցին նաեւ թուրքական զինված ուժերի գործող գեներալներ, ինչը դիտորդները բնութագրեցին որպես Էրդողանի կառավարության կողմից նախադեպ ստեղծելուն միտված քայլ:

<sup>9</sup> Արեւմտյան որոշ աղբյուրներ գրում են, թե Էրդողանի վերջնական նպատակն է՝ նոր սահմանադրությամբ Թուրքիան դարձնել նախագահական հանրապետություն եւ ընտրվել երկրի նախագահ՝ այդ կերպ շարունակելով ղեկավարել պետությունը:

<sup>10</sup> Կարծիք կա, որ ԱԶԿ հակառակորդները կընդունեն սպասողական դիրք եւ չեն գործի, մինչեւ որ Թուրքիան չբախվի հերթական լուրջ խնդրին, օրինակ՝ տնտեսական հերթական ճգնաժամին, ինչն անխուսափելիորեն կթուլացնի ԱԶԿ ներքաղաքական դիրքերը եւ գործելու հնարավորություն կբացի ընդդիմադիրների համար:

## **ԹՈՒՐՔ – ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ**

### **Հայկ Գաբրիելյան**

Թուրք-ամերիկյան հարաբերությունների ներկա փուլին անդրադառնալուց առաջ հարկ է վերհիշել 2002 թվականին Թուրքիայում իշխանության եկած Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) մի շարք քայլերը, որոնք առնչվում են ամերիկյան շահերին: Թուրքիան 2003 թվականին հրաժարվեց մասնակցել Իրաքի օկուպացիային, 2008 թվականի օգոստոսին ռուս-վրացական հնգօրյա պատերազմի ժամանակ փաստացիորեն աջակցեց Ռուսաստանին, իսկ այժմ ջերմ հարաբերություններ է հաստատել Իրանի հետ, եւ փոխարենը՝ կտրուկ սրվել են թուրք-իսրայելական հարաբերությունները:

Չպետք է մոռանալ, որ այս տարի Թուրքիան՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամ, դեմ քվեարկեց Իրանի հանդեպ ՄԱԿ-ի պատժամիջոցներին, ինչի համար ԱՄՆ-ը մեղադրեց Եվրոպային, քանի որ վերջինս Թուրքիային չի ցանկանում տեսնել իր շարքերում եւ դրանով իսկ նրան մղում է դեպի արեւելք:

2010 թվականի սեպտեմբերի 23-ը Թուրքիայի համար դարձավ պատմական օր. Թուրքիայի եւ ՄԱԿ-ի պատմության ընթացքում առաջին անգամ Թուրքիայի ղեկավարն էր նախագահում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստը: Օրակարգում էր խաղաղություն հաստատելու գործում ջանքերի ներդրման խնդիրը: Բնականաբար, այստեղ եւս Գյուլը բաց չթողեց Իսրայելից պաշտոնական ներողություն պահանջելու հարմար պահը:

Սեպտեմբերի 24-ին Թուրքիայի եւ ԱՄՆ նախագահներ Գյուլն ու Օբաման Նյու Յորքում «ոտքի» վրա հանդիպում անցկացրին: Նույն օրը «Նյու Յորք թայմսն» իր հոդվածներից մեկը նվիրեց թուրք-ամերիկյան հարաբերությունների ներկա փուլին: Դրանում նշված էր հետեւյալը. «ԱՄՆ-ին անհանգստացնում են թուրք-իրանական եւ թուրք-իսրայելական հարաբերությունները, Վաշինգտոնին սկսում են խանգարել Անկարայի ակտիվ արտաքին քաղաքական քայլերը: Իրանի միջուկային ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է թուրքական բանկերի միջոցով: Դա, Իսրայելի հետ հարաբերությունների վատթարացման հետ մեկտեղ, վնասում է Մերձավոր Արեւելքում խաղաղություն հաստատելու ԱՄՆ ջանքերին»:

Չողվածում ուշադրություն էր հրավիրված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 65-րդ նստաշրջանում Թուրքիայի նախագահի հնչեցրած հայտարարությունների վրա. «Եթե այսօր դուք նայեք համաշխարհային խնդիրներին, ապա կտեսնեք, որ դրանք Թուրքիան դրել են առավել շահեկան վիճակում: Ժամանակին Թուրքիան Եվրոպայի հիվանդ մարդն էր, մինչդեռ այսօր նա Եվրոպայի միակ առողջ մարդն է: Թուրքիան, Բրազիլիայի հետ համատեղ, հանդես է գալիս Իրանի միջուկային ծրագրի դիվանագիտական լուծման օգտին, եւ ՄԱԿ-ի պատժամիջոցները չպետք է ազդեն թուրք-իրանական ջերմ տնտեսական հարաբերությունների վրա: Եթե ցանկանում են, որ մենք Իրանի հետ ընդհանրապես առեւտուր չհանենք եւ ոչ մի տնտեսական հարաբերություն չունենանք, ապա դա Թուրքիայի հանդեպ անարդարացի մոտեցում է»:

Այս առումով Թուրքիայի նախագահ Գյուլն ավելի առաջ գնաց եւ հոկտեմբերի 5-ին, հանդես գալով Տրապիզոնի առեւտրաարդյունաբերական պալատում, թուրք գործարարներին կոչ արեց ընդլայնել Իրանի հետ ապրանքաշրջանառությունը. «Նրանք, ովքեր տեղյակ չեն, կարող են զայրանալ Իրանի հետ մեր առեւտրական կապերից, սակայն թուրք-իրանական առեւտուրը կարելուր նշանակություն ունի մեզ համար»:

Չիչեցնենք, որ ներկայումս Իրանն էներգետիկ ոլորտում Թուրքիայի երկրորդ խոշոր գործընկերն է (Ռուսաստանից հետո), երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը կազմում է 11 միլիարդ դոլար, ծրագրվում է այն հասցնել մինչեւ 20-30 միլիարդի, ինչպես նաեւ միմյանց միջեւ առեւտուրն իրականացնել ազգային արժույթներով ու թուրք-իրանական սահմանին ստեղծել ազատ առեւտրային գոտի:

Զնայած այդ ամենին՝ սեպտեմբերի 26-ին Գյուլը Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում հայտարարեց, որ Թուրքիան մշտապես կհանդիսանա ԱՄՆ հուսալի դաշնակիցը: Սա շատերն սկսեցին որակել որպես հավատարմության երդում ԱՄՆ-ին, սակայն շատ շուտով հասկացան, որ դա բնավ այդպես չէ:

Թուրքիան շարունակում է ավելի ու ավելի ինքնուրույն քաղաքականություն վարել՝ ձգտելով ձերբազատվել ԱՄՆ «կրտսեր գործընկերոջ» կարգավիճակից, ինչը բնորոշ է եղել նրան «Սառը պատերազմի» ողջ ընթացքում: Թուրք-ամերիկյան (ինչպես նաեւ թուրք-իրանական, թուրք-իսրայելական, թուրք-ռուսական) հարաբերությունների ներկայիս իրավիճակի հանդեպ իր դժգոհությունն արտահայտելու եւ Թուրքիային զսպելու համար ԱՄՆ-ը դիմում է տարբեր միջոցների: Մասնավորապես, վերջին շրջանում ԱՄՆ-ը միջազգային տարբեր ատյաններում մշտապես



քվեարկում է թուրքիային շահեկան բանաձևերի դեմ, ինչպես նաև սեփական երկրում ընդունում հակաթուրքական բանաձևեր:

Սեպտեմբերի 29-ին էլ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը 30 կողմ եւ 1 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Գազա ուղեւորվող «Ազատության նավատորմի» վրա Իսրայելի գործած հարձակումը դատապարտող բանաձևը: Քվեարկության արդյունքներից պարզ դարձավ, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) անդամ 57 երկրների կողմից առաջադրված այս բանաձևի դեմ քվեարկել է միայն ԱՄՆ-ը: Թուրքական մամուլը չխորշեց այս մասին նյութերը վերնագրել հետեւյալ կերպ. «Միայն ԱՄՆ-ը քվեարկեց թուրքիայի դեմ»:

Փաստորեն, նման կերպ ԱՄՆ-ը Իսրայելին պաշտպանում է միջազգային հանրության հարձակումներից եւ սահմանափակում թուրքիայի հնարավորությունները՝ «Ազատության նավատորմի» միջադեպի կապակցությամբ Իսրայելին պատասխանատվության ենթարկելու համար:

Թուրքիայի հանդեպ ԱՄՆ-ի կողմից կիրառվող զսպիչ միջոցներ են հանդիսանում նաև քրդական, կիպրական ու հայկական գործոնները: Սատնանշվում է, որ երբ լարվում են թուրք-ամերիկյան հարաբերությունները, ԱՄՆ-ում ամեն անգամ հիշում են այս խնդիրները:

Այս առումով թուրքիան ԱՄՆ-ից հերթական «ապտակն» ստացավ սեպտեմբերի 30-ին, երբ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը հաստատեց թիվ 1631 օրինագիծը, որով թուրքերին կոչ էր արվում չոչնչացնել այսպես կոչված Յուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության տարածքում գտնվող եկեղեցիներն ու պատմական արժեքները:

«Հարգանք ցուցաբերել Յուսիսային Կիպրոսում թուրքական օկուպացիայի տակ գտնվող կրոնական արժեքների եւ կրոնական ազատությունների նկատմամբ» անվանմամբ նախագծում նշված էր հետեւյալը. «Կիպրոսի թուրքական հատվածում 80 եկեղեցիներ վերածվել են մզկիթի, 28-ը թուրքական բանակի կողմից վերածվել են պահեստների ու բարաքների, եւ միայն 6 եկեղեցի է վերածվել թանգարանի»:

Դրանից անմիջապես հետո թուրքիայի արտգործնախարարությունը կտրուկ հակազդեց այդ բանաձևին՝ նշելով, որ այն կողմնակալ է եւ վնասում է կիպրական խնդրի լուծմանը: Սակայն այս դեպքում թուրքիան ռիսկի չդիմեց՝ ԱՄՆ-ից հետ կանչելու սեփական դեսպանին, ինչպես որ տեղի ունեցավ մարտի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից Հայոց ցեղասպանության մասին թիվ 252 բանաձևի ընդունումից հետո:

2011 թվականին սկսվելու է Իրաքի տարածքից ամերիկյան զորքերի ու սպառազինության դուրսբերման գործընթացը, ինչի կապակցությամբ

վերջերս Թուրքիան հայտարարեց, որ այդ նպատակով պատրաստ է տրամադրել իր տարածքը (ինչը, ի դեպ, նա չարեց 2003 թվականին, երբ ԱՄՆ-ը պատրաստվում էր ներխուժել Իրաք): Սակայն Վաշինգտոնը հայտարարեց, որ մտադիր չէ այդ նպատակով օգտագործել Թուրքիայի տարածքը:

Ի դեպ, ամերիկյան կիսապաշտոնական կայքերն ու ամսագրերն անընդհատ տպագրում են «Մեծ Քուրդիստանի» քարտեզը եւ որպես նրա մայրաքաղաք նշում Դիարբեքիրը, ինչը խիստ զայրացնում է թուրքերին:

Ներկայումս միմյանցից դժգոհ են նաեւ երկու երկրների հատուկ ծառայությունները: Մասնավորապես, ամերիկյան Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՉՎ) թուրքական հատուկ ծառայություններից պահանջում է առավել սերտորեն համագործակցել «Ալ-Քաիդա», «Հիզբալլահ» եւ «Համաս» խմբավորումների դեմ իր պայքարում: Սակայն այդ պահանջը հազիվ թե բավարարվի, քանի որ Թուրքիան ջերմ հարաբերությունների մեջ է վերջին երկու կազմակերպությունների հետ:

Թուրքական կողմն էլ իր հերթին պահանջում է նույնն անել Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) զինյալների դեմ պայքարում եւ մասնակցություն ցուցաբերել Յուսիսային Իրաքում գտնվող ՔԲԿ բազաները վերացնելու ուղղությամբ: Սեպտեմբերի վերջին Թուրքիայի ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայը հայտարարեց, որ ՔԲԿ զինյալների գործունեության չեզոքացման հարցում իրենք ԱՄՆ-ից ակնկալում են առավել լուրջ քայլեր:

Հոկտեմբերի սկզբին թուրքական հետախուզության (MIT) հրապարակած հաշվետվության մեջ նշված է, որ քուրդ զինյալներից խլված զենքի մեծամասնությունը մատակարարվել է Ռուսաստանից: Մասնավորապես, խլված ինքնաձիգների 70 տոկոսը եղել են «Կալաշնիկով» տիպի ռուսական ինքնաձիգեր, իսկ խլված հակատանկային ականների նվազագույնը 85 տոկոսը ՔԲԿ-ին մատակարարել են զենքի առևտրով զբաղվող ռուս վաճառականները: Այս մասին Թուրքիային տեղյակ են պահել ԱՄՆ հատուկ ծառայությունները: Դրանով ԱՄՆ-ը ձգտում է միմյանց բախեցնել Թուրքիային ու Ռուսաստանին եւ որոշակիորեն սառեցնել նրանց միջեւ առկա ջերմ հարաբերությունները:

ԱՄՆ-ից ստացվող հետախուզական տվյալներից ունեցած սեփական կախվածությունը նվազեցնելու համար Թուրքիան ներկայումս աշխատանքներ է տանում դեպի տիեզերք սեփական արբանյակ արձակելու ուղղությամբ: Պլանավորված է, որ 2012 թվականին «Գյոքթուրք» անվանմամբ հետախուզական արբանյակը կարձակվի տիեզերք եւ իր գործունեությունը կծավալի շուրջ 6 տարի: Նախագծի արժեքը գնահատ-

վում է 200 միլիոն դոլար: 650 կիլոմետր վեր բարձրանալու ունակություն ունեցող այդ արբանյակն ի վիճակի կլինի տիեզերքից հետեւելու 60 սանտիմետրից ավելի մեծություն ունեցող օբյեկտների շարժմանը: Բնականաբար, այն կհետեւի ՔԲԿ զինյալների շարժմանը:

Նույն նպատակով Թուրքիան սկսել է կառուցել իր «Մալե» եւ «Բայրաքթար» առաջին անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ, հետախուզական ինքնաթիռ), որոնց շնորհիվ կնվազի նաեւ ԱԹՍ-երի ներկրման հարցում Իսրայելից ունեցած Թուրքիայի մեծ կախվածությունը:

Վերոնշյալից հետեւում է, որ թուրք-ամերիկյան հարաբերություններն ապրում են իրենց ամենավատ ժամանակաշրջանը: Ներկայումս Թուրքիան դասվում է բնակչության շրջանում բարձր մակարդակի հակա-ամերիկանիզմ (շուրջ 70%) ունեցող երկրների շարքին: Թուրք-իսրայելական հարաբերությունների կտրուկ վատթարացումից հետո ԱՄՆ-ը ստիպված էր ընտրություն կատարել այդ երկու երկրների միջեւ: Եվ չնայած Թուրքիան ՆԱՏՕ անդամ միակ մահմեդական երկիրն է, ԱՄՆ-ը նախապատվությունը տվեց Իսրայելին:

Մյուս կողմից, պետք է նկատել, որ ԱՄՆ-ի համար բավական կարեւոր է Թուրքիայի հետ համագործակցությունն Աֆղանստանում: Թուրքական խաղաղապահ զորքերն առաջատար դիրք են զբաղեցնում աֆղան զինվորների ու ոստիկանների նախապատրաստության հարցում: Այս կապակցությամբ հոկտեմբերի 8-ին Անկարայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսենը շնորհակալություն հայտնեց Էրդողանին: Ի դեպ, հոկտեմբերի սկզբին, երկարամյա ընդմիջումից հետո, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ է դարձել թուրք դիվանագետը՝ Թուրքիայի նախագահի արտաքին հարցերով գլխավոր խորհրդական (արդեն նախկին) Յյուսեփն Դիրիյոզը:

## **ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*Վերջին շրջանում ռուս-իրանական հարաբերություններում տեղի ունեցող զարգացումները նոր միջազգային իրավիճակ են ստեղծում Իրանի Իսլամական Հանրապետության շուրջ, որի հիմնական բնորոշիչներից կարող է դառնալ Թեհրանի վերջնական մեկուսացումը: Միևնույն ժամանակ, Իրանում արձանագրվում են նոր փոփոխություններ սոցիալ-տնտեսական ոլորտում, որոնք կարող են խաթարել երկրի քաղաքական կայունությունը:*

### **Ռուս-իրանական հարաբերություններ**

Սեպտեմբերի 22-ին հրապարակվեց Ռուսաստանի նախագահ Ղ.Մեդվեդևի հրամանը «ՄԱԿ ԱԽ հունիսի 9-ի թ. 1929 բանաձևի կատարման մասին», համաձայն որի՝ ռուսական ընկերություններին եւ կառույցներին արգելվում է Իրանին մատակարարել C-300 հակահրթիռային միջոցներ, ինչպես նաեւ հարձակողական եւ պաշտպանական այլ սպառազինություն: Չնայած C-300 հակահրթիռային միջոցների մատակարարման մասին պայմանագիրը ստորագրվել էր դեռեւս 2007-ին, Մոսկվան այդ հարցում չէր շտապում՝ հաշվի առնելով իսլամական հանրապետության շուրջ ստեղծված միջազգային բարդ իրավիճակը: ՌԴ նախագահի հրամանագրից հետո պարզ դարձավ, որ սպառազինության մատակարարում Իրանին այլեւս չի կայանա:

Թեհրանի արձագանքը Ռուսաստանի նախագահի հրամանագրին կոշտ չի կարելի անվանել: Մինչեւ օրս Մոսկվայի որոշումը չեն մեկնաբանել ոչ Իրանի նախագահը, ոչ ԱԳՆ ղեկավարը: Միակ կոշտ մեկնաբանությունը տվել է Իրանի Մեջլիսի միջազգային հարաբերությունների եւ ազգային անվտանգության հանձնաժողովի ղեկավար Ա.Բորոնջերդին, որը խոստացել է դատի տալ Ռուսաստանին, եթե վերջինս չկատարի պարտավորությունները սպառազինությունների մատակարարման գծով:

Մոսկվան իրանական արձագանքին պատասխանում է՝ հիմք ընդունելով ռուս-իրանական պայմանագրի «Ֆորս-մաժորների մասին» բաժնում ամրագրված դրույթները, որոնցում ընդգծվում է, որ կողմերից մեկն առանց տույժերի կարող է չկատարել պարտավորությունները՝

չնախատեսված եւ օբյեկտիվ բնույթի դժվարությունների դեպքում: Հենց նման դժվարություն է ներկայացնում ՄԱԿ ԱԽ բանաձեւը, որն, ըստ ՌԴ ԱԳՆ ղեկավար Ս.Լավրովի, «ֆորսմաժորային իրավիճակ» է ստեղծում:

Կարելի է ենթադրել, որ Թեհրանի դեռեւս «մեղմ» արձագանքը Ռուսաստանի որոշմանը նպատակ ունի ավելի չբարդացնել հարաբերությունները Մոսկվայի հետ: Վերջինս ակնհայտորեն ցույց է տալիս, որ դեմ չէ «զոհել» հարաբերությունները Թեհրանի հետ, եթե այդ քայլը կհանգեցնի Վաշինգտոնի հետ այլ ռազմավարական հարցերում փոխըմբռնման հաստատման: Մոսկվայի դիրքորոշումը նաեւ պայմանավորված է նրանով, որ Թեհրանի հետ համագործակցությունը եւ Իրանի շահերի պաշտպանությունը միջազգային ատյաններում չեն ուժեղացրել Ռուսաստանի դիրքերն իսլամական հանրապետությունում. «Գազպրոմի», «ԼուկՕյլի», «Ռոսնեֆտի», «Բիլայնի» եւ ռուսական այլ ընկերությունների՝ Իրանում ներդրումներ կատարելու ջանքերը հանդիպել են իրանական իշխանությունների հակադարձմանը: Այն ոլորտները, որոնցում իրանցիները բարյացակամություն են դրսևորել ռուսական ընկերությունների նկատմամբ, ռազմական եւ միջուկային համագործակցության ոլորտներն են, ինչը բխել է Թեհրանի շահերից: Եվ Մոսկվայի հրաժարումը ռազմական ոլորտում համագործակցությունից հարված է առաջին հերթին Իրանին:

Հնարավոր է, որ Ռուսաստանի դիրքորոշման կոշտացումն Իրանի նկատմամբ ուղղակիորեն կապված է նաեւ իրանական միջուկային ծրագրի հետ, որը վերջին ամիսներին նոր թափ է ստացել: Պաշտոնական Թեհրանն արդեն հայտարարել է, որ Նաթանգում շահագործվել է ուրանի հարստացման համար անհրաժեշտ ցենտրիֆուգների երկրորդ շարքը, ինչը ռազմական նպատակներով օգտագործվելու նշանակություն կարող է ունենալ: Այս ամենն արվել է նաեւ Ռուսաստանի ղեկավարության բացասական դիրքորոշման պայմաններում: Բացի դրանից, ինչպես հայտարարել է ՌԴ ԱԳ փոխնախարար Ա.Նեստերենկոն, Իրանն ընդհանրապես չի տեղեկացնում Ռուսաստանին իր հետագա քայլերի մասին:

Այս պարագայում Մոսկվայի զայրույթն Իրանի (ուն շահերը վերջին տարիներին ՌԴ-ն պաշտպանել է գրեթե բոլոր միջազգային ատյաններում) քաղաքականության վերաբերյալ առավել քան հասկանալի է: Մոսկվայի դիրքորոշման մեջ, հավանաբար, դեր է խաղացել նաեւ ԱՄՆ ժամանակավոր հրաժարումն Իրանի դեմ ռազմական ուժի կիրառումից: Այս մասին են վկայում տարբեր աղբյուրներ, որոնք, բացի այդ, նշում են, թե Վաշինգտոնն Իսրայելին կարողացել է համոզել՝ զերծ մնալ Իրանին հարվածելուց: Ինչպես նշում է Վ.Կորյակինը, հղում կատարելով «Ալ-Հայաթ» պարբերականին, նման առաքելությամբ էր օգոստոսի 24-ին Երուսաղեմ

Ժամանել ԱՄՆ օգնական եւ Մերձավոր Արեւելքում ԱՄՆ նախագահի հիմնական բանագնաց Դ.Ռոսը: Այս պայմաններում Մոսկվան կարող է հանդգնած լինել, որ իր հարավային սահմաններում նոր պատերազմ չի սկսվելու, եւ այդ պատճառով սկսել է ավելի հստակ ճնշում գործադրել Իրանի վրա՝ գիտակցելով, որ այն չի օգտագործվի երրորդ պետությունների կողմից իրենց ռազմավարական հարցերը լուծելու համար:

Ամենայն հավանականությամբ, առաջիկա ամիսներին պետք է սպասել Իրանի նկատմամբ միջազգային ճնշման ուժեղացման, ինչին Թեհրանը պատրաստվում է՝ այդ թվում թեթևացնելով կառավարության սոցիալ-տնտեսական բեռը, ինչի առաջին ազդանշաններից էին Իրանում սեպտեմբերին արձանագրված գնաճն ու դոլարի փոխարժեքի կտրուկ բարձրացումը:

### **Ներքին իրավիճակն Իրանում**

Ինչպես ցույց տվեցին 2010-ի ամռանն անցկացված ընդդիմադիր միջոցառումները, Իրանի ներքաղաքական կյանքում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ. անցած տարի Մուսավիի կողմից ձեւավորված ընդդիմադիր շարժման գլխավոր դերակատար է դարձել նախագահի նախկին թեկնածու Մ.Քյարուբին: Ի տարբերություն Մուսավիի՝ Քյարուբին այս ամռանը չվարանեց միանալ ցուցարարներին եւ մի քանի կոշտ հայտարարություններով հանդես գալ գործող նախագահի հասցեին, այդ թվում՝ անվանելով նրան «անօրինական նախագահ»: Ամենայն հավանականությամբ, Մուսավիի անցած տարվա կեցվածքը, որով լրջորեն փորձ էր արվում ընդդիմությանը զերծ պահել հեղափոխական տրամադրություններից, զգալիորեն խաթարել է նրա դիրքերն ընդդիմադիր զանգվածի շրջանում: Առաջիկա մեկ-երկու տարում պարզ կդառնա, թե Քյարուբին որքանով կարող է զբաղեցնել իրական առաջնորդի դերը եւ 2 տարի հետո իր շուրջ համախմբել ընդդիմադիր ուժերը՝ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տանելու համար:

Իրավիճակն ավելի բարդ է իշխող շրջանակներում, ինչն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է նախագահ Մ.Ահմադինեժադի եւ հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեյի վատթարացած հարաբերություններով: Դրա մասին կարող են վկայել վերջին ամիսներին Մ.Ահմադինեժադի դեմ իրանական պետական լրատվամիջոցներում հրապարակվող վերլուծությունները, որոնցում կոշտ քննադատության է ենթարկվում գործող կառավարության տնտեսական քաղաքականությունը: Այն մասին, որ Իրանի նախագահը սկսել է ավելի ակնհայտ գործել որպես հոգեւոր

իշխանություններից ազատ ուժի կենտրոն, վկայում է Մ.Ահմադինեժադի կողմից իր ազգականին՝ Ռ.Մաշային իշխանություն վերադարձնելը: Հիշեցնենք, որ Մաշային անցած տարի նշանակվել էր Իրանի փոխնախագահ, սակայն հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեին ստիպել էր նախագահին Մաշային հեռացնել պաշտոնից, քանի որ նրա նկատմամբ ակնհայտ բացասական վերաբերմունք ունի հոգեւոր ընտրանու մեծ մասը, բացի այդ, Իրանի նախագահի ազգականը լրջորեն կասկածվում է կոռուպացված լինելու մեջ: Այս տարի, չնայած ընտրանու բացասական վերաբերմունքին, Ահմադինեժադը Մաշային նշանակեց իր աշխատակազմի ղեկավար՝ հատուկ հրամանով ավելացնելով նրա պարտականությունները մինչեւ փոխնախագահի աստիճանի:

Սակայն հոգեւոր ընտրանու հիմնական քննադատության առարկան նախագահի վարչական բարեփոխումների ծրագիրն է: Դրա համաձայն՝ 144 պետական մարմիններ եւ ընկերություններ պետք է դուրս բերվեն Թեհրանից եւ տեղափոխվեն այլ շրջաններ: Ենթադրվում է, որ դրա արդյունքում կխթանվի շրջանների զարգացումը, իսկ Թեհրանի բնակչությունը կպակասի շուրջ կես միլիոնով: Սակայն նախագահի քաղաքականության քննադատներն այս ծրագրում այլ նպատակ են տեսնում. նախագահը, որը նույնպես պատրաստվում է տեղափոխվել Թեհրանից դուրս, նպատակ ունի իր շուրջը կենտրոնացնել ողջ վարչական կառույցները եւ դրա միջոցով ավելի վերահսկելի դարձնել գործընթացները երկրում: Խոսքը, փաստորեն, երկրորդ Դումի ստեղծման մասին է, որտեղ կենտրոնանալու են Իրանի աշխարհիկ իշխանությունները, որոնց վերահսկելու է նախագահը, այլ ոչ թե հոգեւոր առաջնորդը: Ակնհայտ է, որ «հին ընտրանուն» այս ծրագիրը չի կարող դուր գալ, եւ նա իր կողմից դեռեւս վերահսկվող լրատվամիջոցներով կոշտ քննադատության է ենթարկում նախագահի ծրագիրը:

Բազմաթիվ քննադատությունների առարկա է դարձել նաեւ Ահմադինեժադի տնտեսական քաղաքականությունը: Մարտին նրա՝ խորհրդարան ներկայացրած տարեկան բյուջեն ենթադրում էր հրաժարում կայուն ձեւով բնակչությանը հատկացվող սուբսիդիաներից: Սուբսիդավորումն Իրանի կառավարության վրա տարեկան շուրջ 30 մլրդ ԱՄՆ դոլար է նստում. սուբսիդավորվում են բենզինի, գազի, ջրի եւ էլեկտրաէներգիայի գները: Չնայած Իրանի խորհրդարանը դրականորեն էր արձագանքել նախագծին, սակայն ոչ ոք չէր սպասում, որ նախագահը սուբսիդավորումը կվերացնի միանգամից: Սեպտեմբերի վերջին էլեկտրաէներգիայի եւ գազի գների վճարման համար հատկացված կտրոնները սոցիալական շոկ առաջացրին բնակչության շրջանում: Պարզվեց, օրինակ, որ էլեկտրաէներգիայի

գինն ավելացել է 8, գազինը՝ 3 անգամ: Բնակչության բողոքը միանգամից տեղափոխվեց խորհրդարան, որտեղ նախագահի քաղաքականության նկատմամբ ընդվզման նոր ալիք բարձրացավ: Ինչ վերաբերում է Ս.Ահմադինեժադին, ապա նա արձագանքեց հետեւյալ կերպ. սա է արդիականացման համար անհրաժեշտ գումարների հայթայթման ճանապարհը, եւ մենք պետք է այն վճարենք:

Արդեն սեպտեմբերի վերջին նոր հարված հասցվեց Իրանի մակրոտնտեսական անվտանգությանը. Իրանի կենտրոնական բանկը հայտարարեց, որ դադարում է ֆինանսավորել իրանական ռիալի կայունությունը, ինչը բերեց դոլարի 20 տոկոսանոց արժեւորման: Չնայած նախագահը սրա համար եւս քննադատվեց, սակայն այս քայլը գուցե արդարացված է նրանով, որ Իրանը պատժամիջոցների պայմաններում ստիպված է խնայել իր արտարժութային պահուստները, որոնք կարող են անհրաժեշտ լինել իսլամական հանրապետության արտաքին առեւտրի ծավալները պահպանելու համար:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ պետք է փաստել, որ քաղաքական կյանքն Իրանում հետագա ակտիվացման հնարավորություն ունի: Դրա հիմնական գործող կողմերն են լինելու Իրանի նախագահի եւ «հին ընտրանու» շուրջ կենտրոնացած ուժերը. առաջինները փորձելու են ամրապնդել, վերջինները՝ պահպանել իրենց դիրքերը:



## ԻՐԱՔՅԱՆ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

### Արաքս Փաշայան

Իրաքյան Քուրդիստանի՝ որպես փաստացի անկախ պետության, պատմությունը սկիզբ է առնում 1991-ից՝ Ծոցի երկրորդ ճգնաժամից հետո, երբ կոալիցիոն ուժերը ԱՄՆ-ի գլխավորությամբ «Փոթորիկ անապատում» ռազմական գործողության արդյունքում հաղթանակ տարան Սադամ Հուսեյնի դեմ (1979–2003) եւ վերջինս դուրս բերեց իրաքյան զորքերը գրավյալ Քուվեյթից: Մերձավոր Արեւելքում ստեղծված նոր իրավիճակը, փաստորեն, բեկում առաջացրեց քրդական հարցում: Նախկինում Արեւմուտքը, մասնավորապես՝ ԱՄՆ-ը, շրջանցում էր քրդական հարցը, քանի որ Իրաքը դիտարկվում էր իբրեւ Իրանի Իսլամական Հանրապետությանը հակադրող ուժ: Պատմական հետագա զարգացումներն ավելի շահեկան եղան քրդերի համար, որոնց նկատմամբ Իրաքում տարիներ շարունակ էթնիկ խտրականություն է կիրառվել:

2003-ին ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացիան եւ բաասական վարչակարգի տապալումը նոր հեռանկարներ բացեցին քրդական ազգային շարժման համար: Ստեղծված նոր իրավիճակը ոչ միայն մեծացրեց քրդական գործոնի նշանակությունը, այլեւ ամրապնդեց Քուրդիստանի տարածաշրջանի կամ քրդական ինքնավարության դիրքերը՝ նպաստելով Քուրդիստանում պետական կառույցների, քաղաքական համակարգի, տնտեսության ու հասարակական հարաբերությունների հետագա զարգացմանը: Սակայն քրդական ազգային շարժման հաջողությունը շատ բաներով պայմանավորված էր ոչ միայն միջազգային հարաբերություններում ստեղծված նպաստավոր իրավիճակով, այլեւ՝ նախկինում միմյանց հետ հակասություններ ունեցող քրդական ընտրանիների (Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) եւ Քուրդիստանի հայրենասիրական կուսակցության (ՔՀԿ) միջեւ ձեռք բերված կոնսենսուսով:

2003-ից ի վեր քառսի եւ անիշխանության մեջ հայտնված Իրաքում Քուրդիստանը սեփական զինված ուժերի (Փեշմերգա) եւ ամերիկյան բանակի աջակցությամբ դարձավ անվտանգության եւ կայունության այն օազիսը, որը բռնեց զարգացման ուղին: Այս իրողությանը նպաստեց նաեւ շրջանում նավթային ռեսուրսների առկայությունը, որի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Երբիլը:

2005-ին Իրաքում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձեւավորված խորհրդարանը Իրաքի նախագահի հռչակեց ՔՅԿ-ի առաջնորդ Ջալալ Թալաբանիին: Չնայած Իրաքի նախագահի լիազորություններն ավելի քիչ են, քան վարչապետինը, սակայն քուրդ նախագահի ընտրվելու փաստն աննախադեպ է Իրաքի պատմության մեջ: Բացի այդ, քրդական կուսակցությունները մաս կազմեցին 275 տեղանոց իրաքյան խորհրդարանին (53 մանդատ)՝ ձեռնամուխ լինելով իրաքյան քաղաքական տարբեր ուժերի հետ համագործակցության հաստատմանը:

Փաստորեն, քրդերը ներիրաքյան զարգացումներում ստանձնեցին որոշակի դերակատարություն՝ չնայած արաբական թե՛ շիա, թե՛ սուննի շրջանակների, ինչպես նաեւ թուրքմենների հետ մինչ օրս շարունակվող որոշակիորեն լարված հարաբերություններին, ինչը, մի կողմից, կապված է նավթային ռեսուրսներով հարուստ Քիրքուքի խնդրի, որի վերջնական կարգավիճակի որոշման հարցը շարունակում է առկախ մնալ, մյուս կողմից՝ Իրաքի առանձին շրջանների նկատմամբ քրդերի ունեցած հավակնությունների եւ նավթի վաճառքից ստացվող եկամուտների բաշխման հարցի հետ: 2009թ. ընդունված քրդական նոր սահմանադրությամբ՝ Քուրդիստանի մաս են հռչակված Նինվեի եւ Դիյալայի նահանգները, ինչպես նաեւ Քիրքուքը, որը, Իրաքի գծով փորձագետ, ռուսաստանցի արեւելագետ Գ.Միրսկու կարծիքով, քրդերի Երուսաղեմն է, խնդիր, որը քրդերն անպատճառ ձգտում են կարգավորել հօգուտ իրենց, առանց փոխջիջումների:

Հարկ է նշել, որ իրաքյան քրդերը կարողացան կարգավորել նաեւ իրենց երկրի համար կենսական նշանակություն ունեցող արտաքին քաղաքական կարեւորագույն հարցերը, մասնավորապես՝ դրական շրջադարձ կատարվեց քրդական վարչակարգի եւ Անկարայի հարաբերություններում, որը խարսխվեց փոխշահավետության վրա: Քրդական վարչակարգն Անկարայի առաջ պարտավորություն ստանձնեց՝ պայքարել Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) դեմ, եթե վերջինս օգտագործի Քուրդիստանի տարածքը՝ Թուրքիայի դեմ զինված պայքար սկսելու համար:

2008-ից քուրդ-թուրքական հարաբերությունները նոր որակ են ձեռք բերել<sup>1</sup>: 2010թ. մարտ ամսից Էրբիլում գործում է թուրքական հյուլպատոսություն: Քրդերը համոզված են, որ Թուրքիան կարող է երաշխավորել Քուրդիստանի տնտեսական ապագան. նրանք կարող են օգտագործել Թուրքիայի տարածքը՝ նավթ արտահանելու եւ արտաքին տնտեսական հարաբերություններ զարգացնելու համար: Անկարան եւ Էրբիլն այլեւս հաստատել են առեւտրատնտեսական սերտ համագործակցություն:

Քուրդիստանում ներկայումս գործում են թուրքական հարյուրավոր ընկերություններ, որոնք հիմնականում ներգրավված են շինարարության եւ նավթի արդյունահանման ոլորտներում: Քրդական վարչակարգը շահագրգռված է թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմամբ՝ նկատի ունենալով նաեւ քրդերի նկատմամբ ոչ բարեկամաբար տրամադրված Իրանի հարածուն ազդեցությունը ներիրաքյան գործընթացներում, իրանաձեռ շիական կուսակցությունների առաջատար իրավիճակում հայտնվելը, քրդերի հիմնական դաշնակցի՝ ԱՄՆ-ի աստիճանաբար թուլացող դիրքերն Իրաքում:

Թուրք-քրդական համագործակցությանը զուգահեռ ընդլայնվում են նաեւ քուրդ-իսրայելական հարաբերությունները: Քրդերի եւ հրեաների հարաբերությունները դարավոր պատմություն ունեն: Բավական է նշել, որ 20-րդ դ. առաջին կեսին Իրաքում (հիմնականում՝ հյուսիսում, Քուրդիստանում) ստվարածավալ հրեական համայնք կար, որ հաշվվում էր մոտ 120.000: Հրեաները (կամ՝ քրդական հրեաները), որոնք ավելի քան 2700 տարի բնակվում էին Իրաքում, ստիպված եղան հեռանալ երկրից արաբ-իսրայելական առաջին պատերազմին (1948–1949թթ.) հաջորդած տարիներին՝ կապված Իրաքում հակահրեական տրամադրությունների ակտիվացման հետ: Քուրդ-հրեական հարաբերություններն, ընդհանուր առմամբ, ջերմ են եղել, եւ ներկայումս Իսրայելից բավական թվով մարդիկ ամեն տարի այցելում են Քուրդիստան: 2003-ից ի վեր Իսրայելը Քուրդիստանի հետ համագործակցում է քաղաքական եւ ռազմական ոլորտներում, բացի այդ՝ զգալի ներդրումներ է կատարել քրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Մերծավոր Արեւելքում, որտեղ Իսրայելը շրջապատված է թշնամի պետություններով, Քուրդիստանի հետ համագործակցությունը կարեւոր նշանակություն է ձեռք բերել, եթե հաշվի առնենք նաեւ այն փաստը, որ Քուրդիստանն Իրանի հետ անմիջական սահման ունի: Բացի այդ, քրդական անկախ պետության ստեղծման հնարավորությունը թուրքիայի վրա ազդելու Իսրայելի լծակներից մեկն է:

### **Քուրդիստանի հեռանկարը**

Իրաքից ամերիկյան մարտական ուժերի հեռացումը (որն իրականացավ 2010թ. օգոստոսի վերջին) անհանգստություն առաջացրեց քրդական հասարակության, ինչպես նաեւ՝ քրդական վերնախավի շրջանում՝ կապված Քուրդիստանի անվտանգության եւ, առհասարակ, երկրի ապագայի հետ: Քրդերն առաջարկում էին, որպեսզի ամերիկյան զինված

ուժերը շարունակեն մնալ այն շրջաններում, որտեղ կար քուրդ-արաբական բախումների վտանգ: Առանձին տեսակետների համաձայն՝ ամերիկյան մարտական ուժերի դուրսբերումն Իրաքից կարող է ավելի ապակայունացնել առանց այդ էլ բարդ իրավիճակը: Նման գնահատականը հիմնավոր է թվում, եթե հաշվի առնենք Իրաքում առկա քաղաքական ճգնաժամը, որ սկիզբ առավ 2010թ. մարտի խորհրդարանական ընտրություններին հաջորդած փուլում: Քաղաքական ուժերին դեռևս չի հաջողվում համաձայնության հասնել կոալիցիոն կառավարության ձևավորման հարցում, ինչը, ըստ առանձին տեսակետների, կարող է շարունակվել մինչև տարեվերջ<sup>2</sup>: Այս պարագայում հանգուցային կարող է լինել 43 մանդատ ունեցող Քրդական դաշինքի՝ ճամբարներից որեւէ մեկին միանալու որոշումը, ինչը նշանակում է, որ քրդական գործոնի նշանակությունը մեծ է ներիրաքյան զարգացումներում:

Պետք է ասել, որ ներկա փուլում ստատուս քվոյի պահպանումը որոշակիորեն ձեռնտու է քրդերին: Այն հնարավորություն է տալիս նրանց մի կողմից՝ գործառել սեփական պետությունը, մյուս կողմից՝ ակտիվորեն մասնակցել Իրաքի ներքին կյանքի գործընթացներին: Միեւնույն ժամանակ, հնարավոր բացասական զարգացումների դեպքում քրդերը կարող են իրենց անկախ հռչակել, որին կենտրոնական իշխանությունները, ազդեցության լծակներ չունենալու պատճառով, հազիվ թե կարողանան հակազդել:

Զնայած Իրաքյան Քուրդիստանի հեռանկարի վերաբերյալ տարաբնույթ կանխատեսումներին, այդ հարցում ներկա պահին տեսանելիություն չկա: Ամեն դեպքում, Քուրդիստանում համոզված են, որ չնայած թե՛ Իրաքից, թե՛ հարեւաններից եկող մարտահրավերներին, Քուրդիստանը, ԱՄՆ-ի հետ ունեցած ռազմավարական համագործակցության շնորհիվ, կարող է հաղթահարել հնարավոր խնդիրները: Քրդերը հույս ունեն, որ Վաշինգտոնը մոտ ապագայում Քուրդիստանում հյուպատոսարան կբացի:

### **Չայերն Իրաքյան Քուրդիստանում**

2003-ին ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացումից հետո երկրում անվտանգության երաշխիքների բացակայության եւ սկիզբ առած քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետեւանքով Իրաքի հայ համայնքը, որը հիմնականում կենտրոնացած էր Բաղդադում, էական վերածեւումների ենթարկվեց: Չատկանշական է, որ բացի արտագաղթից, Իրաքում պատերազմի շրջանում սկիզբ առավ նաեւ ներքին

միգրացիա: Հայերը տեղաշարժվեցին եւ շարունակում են տեղաշարժվել դեպի հյուսիս՝ Քուրդիստան, որտեղ քաղաքական վիճակը կայուն է, իսկ քրդական վարչակարգը խրախուսում է հայերի ներգաղթը:

Իրաքահայերը եկեղեցիներ, կրթական, մարզական եւ ազգային այլ հաստատություններ ունեն քրդական շրջաններում (Էրբիլում, Դոհուքում, Ջախոյում, Ավգրուկում, Հավրեզքում եւ այլն): Քուրդիստանում կա հայկական երեք եկեղեցի՝ Ջախոյում (Ս.Աստվածածին), Ավգրուկում (Ս.Վարդան), իսկ երկու տարի առաջ՝ 2008-ին, եկեղեցի հիմնվեց Դոհուքում (Ս.Ներսես Շնորհալի): Ծրագրվում է նոր եկեղեցիներ կառուցել Էրբիլում եւ Հավրեզքում:

Քուրդիստանի հայկական գյուղական բնակավայրերից թերեւս ամենանշանավորը քրդախոս հայերով բնակեցված Ավգրուկն է, որ բացի եկեղեցուց, ունի նաեւ դպրոց, թաղական խորհուրդ: Ավգրուկի հարեւանությամբ են գտնվում Սումայլ գյուղաքաղաքը եւ Շիքանդալ գյուղը, որտեղ ասորիների կողքին ապրում են նաեւ հայեր: Հատկանշական է, որ Ավգրուկում ապրող հայերը թեւ իրենց կենցաղավարությամբ ու մշակույթով ավելի մոտ են քրդերին, սակայն աչքի են ընկնում հայկական ինքնագիտակցությամբ, ամուր կառչած են ազգային եւ կրոնական ավանդույթներին: Նշենք, որ քրդախոս են նաեւ հյուսիսային Ջախո քաղաքի հայերը, որոնք այս շրջանը բնակեցրել են 1930-ականներից: Նրանք նույնպես հայկական ավանդույթների կրողներ են:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Հավրեզք գյուղը, որ հիմնվել է Վասպուրականի հերոսամարտի մասնակից Լեւոն Շաղոյանի ջանքերով 1920-ականներին: 1970-ականներին պետական եւ քրդական զորամիավորումների միջեւ բախումների հետեւանքով գյուղից հայ բնակչությունը դուրս է բերվել: Ընդհանրապես, հյուսիսային՝ սահմանամերձ շրջանում գտնվող շատ բնակավայրեր դատարկվել են: Հավրեզքը վերահիմնվել է 2005թ. Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության անդամ, ծագումով ասորի Սարգիս Աղաջանի ջանքերով, որը կոորդինացնում է քրիստոնյա փոքրամասնությունների (քաղղեացիներ, ասորիներ, հայեր) հետ քրդական վարչակարգի աշխատանքները: Քրդական աջակցությամբ Հավրեզքում կառուցվել է 115 տուն: Վերաբնակվողները հիմնականում քաղաքաբնակներ են՝ Բաղդադից, Բասրայից, Մոսուլից:

Ներկայումս հայերի թիվը քրդական շրջաններում մոտ երկու հազար է: Քուրդիստանի հայերը համարվում են ինքնավարության լիիրավ քաղաքացիներ: Քրդական իշխանությունները հայերին դիտարկում են որպես առանձին համայնք: Հայերի մասին հիշատակված է Քուրդիստանի

սահմանադրության մեջ, համաձայն որի՝ Քուրդիստանի ժողովուրդը կազմված է քրդերից, արաբներից, թուրքմեններից, քաղղեսացիներից, ասորիներից եւ հայերից: Էթնիկ փոքրամասնությունների համար երաշխավորվում են ազգային, մշակութային եւ վարչական իրավունքներ (ընդհուպ մինչեւ ինքնավարություն): Հայերենը հիշատակված է Քուրդիստանում օգտագործվող լեզուների շարքում: Նշենք, որ Իրաքի նոր սահմանադրության մեջ նույնպես հայոց լեզուն հիշատակվում է Իրաքում գործածվող այլ լեզուների կողքին, իսկ դրա ուսուցանումը սահմանադրությամբ պաշտպանվում է:

2009թ. Քուրդիստանում խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին ընտրական նոր օրենքի համաձայն, որն ամրագրում է քվոտաներ՝ ըստ էթնիկ պատկանելության: 111 տեղանոց խորհրդարանի անդամ դարձավ հայազգի Արամ Շահեն Դավուդ Բաքոյանը՝ ավգրուկցի: Վերջինս երկար տարիներ է, ինչ անդամագրված է Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությանը, որի ներկայիս առաջնորդը Մասուդ Բարզանին է: Արամ Բաքոյանը ժամանակին եղել է Ջախոյի հայկական թաղական խորհրդի անդամ:

Ի դեպ, ընտրությունների մասին օրենքում հայերի եւ քրիստոնյաների մասին խոսվում է առանձին-առանձին: Հայերին խորհրդարանում հատկացված է մեկ, իսկ թուրքմեններին եւ քրիստոնյաներին՝ հինգական տեղ: Բացի այդ, հայերը տեղեր ունեն նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Էրբիլում եւ Դոհուքում (մեկական):

Քրդերի հարաբերությունները քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի հետ բարիդրացիական են, սակայն շատ դեպքերում քրդերը քրիստոնյաների հետ կապված քաղաքական շահեր են հետապնդում: Հատկանշական է, որ քրդերը հայերին բնակեցնում են Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններում: Հայերին առաջարկվել է բնակվել նաեւ Նինվեի դաշտավայրում, շրջան, որը վիճարկվում է արաբների եւ քրդերի կողմից, որտեղ ներկա պահին զգալի թվով քրիստոնյա բնակչություն կա, սակայն մուսուլմանները մեծամասնություն են<sup>3</sup>:

Ամեն պարագայում, ներկա փուլում քուրդ-հայկական հարաբերություններում առկա են դրական միտումներ: Փաստորեն, հայկական բնակավայրերի ձեւավորման գործընթաց է սկսվել քրդաբնակ շրջաններում, որոնք հայապահպանության տեսանկյունից նոր նշանակություն են ձեռք բերել: Հատկանշական է, որ Սիրիայի եւ Թուրքիայի քրդաբնակ շրջաններում նույնպես բնակվում են հայեր, որոնց հիմնական շերտերը քրդախոս են:

<sup>1</sup> Այն բանից հետո, երբ 2008-ի վերջին իրաքյան քրդերը ռազմական օպերացիա իրականացրին ՔԲԿ-ի զինյալների նկատմամբ, Թուրքիան սկսեց բանակցային գործընթացը քուրդ պաշտոնատարների հետ՝ չնայած քրդական անկախ պետության հռչակման հարցում ունեցած մշտական մտահոգությամբ: Նշենք, որ ՔԲԿ-ի հետ քրդական կուսակցությունները խորքային հակասություններ ունեն:

<sup>2</sup> 2010թ. հունիսի սկզբին 70 պատգամավորական մանդատ ստացած շիական իրանամետ Իրաքի ազգային դաշինք խմբավորման հետ միավորվելու մասին հայտարարեց գործող վարչապետ Նուրի Ալ-Մալիքիի Օրենքի պետություն դաշինքը (89 մանդատ): Ամենաշատ ձայներ (91) հավաքել է նախկին վարչապետ Այադ Ալավիի Ալ-Իրաքիյա դաշինքը, որը ներկայացնում է թե՛ սուննի, թե՛ շիա՝ ավելի աշխարհիկ շրջանակների հետաքրքրությունները:

<sup>3</sup> Առանձին տեղեկությունների համաձայն՝ քրդական շրջանակներն առաջ են քաշել Նինվեի նահանգը քրիստոնեական ինքնավարություն դարձնելու գաղափարը՝ ըստ ամենայնի նպատակ ունենալով շրջանն ավելի հեշտությամբ ներառել Քուրդիստանի կազմում: Սակայն նշված գաղափարին, ընդհանուր առմամբ, քրիստոնյաները դեմ են, որոնք համոզված են, որ նմանօրինակ զարգացումների դեպքում իրենց նկատմամբ լարվածությունն առավել կմեծանա: Այդ տեսանկյունից պատահական չէին 2008-ին Մոսուլում քրիստոնյաների դեմ կազմակերպված բռնությունները, որից հետո շրջանը լքեցին 12 հազար քրիստոնյաներ, այդ թվում՝ հայեր: Թեև դեպքերի պատճառները լիովին պարզված չեն, սակայն դրանք, ըստ ամենայնի, միտված էին Իրաքում քրիստոնյաների իրավունքների հնարավոր առաջխաղացումը կասեցնելուն:

**ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ–ՌՈՒՍԱՍՏԱՆ  
ԵՌԱՆԿՅՈՒՆՈՒՄ  
ԲԵՆԻԿԱՆԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Վերջին տասնամյակում միջազգային հարաբերությունների ճարտարապետությունը լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Ձեւավորվող նոր համակարգն էական մի շարք հատկանիշերով տարբերվում է նախորդ ժամանակաշրջաններից եւ բնորոշվում է ուժի նոր կենտրոնների առաջացմամբ: Այդ նոր կենտրոններից առավել ազդեցիկը Չինաստանն է: 1970-ականների վերջին ձեռնամուխ լինելով տնտեսական լուրջ բարեփոխումների իրականացմանը եւ միաժամանակ պահպանելով կառավարման միակուսակցական համակարգը՝ Չինաստանը 21-րդ դարի սկզբում վերածվել է ազդեցության նոր կենտրոնի՝ աստիճանաբար հետեւում թողնելով թե՛ ասիական մյուս հսկաներին, թե՛ եվրոպական պետություններին:

Միջազգային հարաբերություններում վերջին տարիներին նկատվող մյուս միտումը ԱՄՆ-ի դիրքերի աստիճանական թուլացումն է, որը հատկապես վառ արտահայտվեց միջազգային տնտեսական ճգնաժամի պայմաններում: Չնայած ԱՄՆ-ը մի շարք ոլորտներում դեռեւս պահպանում է առաջատարի իր դիրքերը, սակայն ակնհայտ է, որ միջնաժամկետ հեռանկարում (10-15 տարի) այդ պետությունը հարկադրված է հաշտվել սեփական ազդեցության մի մասի կորստի հետ: Նոր համակարգի կարելուր տարրերից մեկը Ռուսաստանի աստիճանաբար ավելացող ինքնավստահությունն է: Պաշտոնական Մոսկվան միանշանակ հավակնում է առնվազն հետխորհրդային տարածաշրջանում գերիշխող դիրքերի ձեռքբերմանը՝ միաժամանակ փորձելով լուրջ դերակատարություն ստանձնել եվրոպական անվտանգության համակարգում՝ եվրոպական անվտանգության նոր պայմանագրի առաջաշան միջոցով:

Իհարկե, ձեւավորվող համակարգը չի սահմանափակվում միայն ԱՄՆ–Չինաստան–Ռուսաստան եռանկյունով: Այստեղ ազդեցիկ դիրքեր են գրավում նաեւ Չնդկաստանը, Բրազիլիան, մասամբ Եվրամիությունը, չնայած այն դեռեւս ի վիճակի չէ միասնական արտաքին քաղաքականություն իրականացնել:

Այնուամենայնիվ, առնվազն միջնաժամկետ հեռանկարում ԱՄՆ–Չինաստան–Ռուսաստան եռանկյունին էական ազդեցություն է թողնելու աշխարհաքաղաքական զարգացումների վրա:



## ԱՄՆ – Չինաստան

Միջազգային հարաբերություններում Չինաստանի ազդեցության աճը կարող է ընթանալ մի քանի ուղղություններով: Չինաստանը կարող է հիմնականում ընդունել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված համակարգին բնորոշ ինստիտուցիոնալ կարգավորումներն ու մեխանիզմները, այդ պետությունը կարող է հանդես գալ նաեւ առկա համակարգի արմատական փոփոխության պահանջով: Սակայն առավել հավանական տարբերակը միջազգային համակարգին Չինաստանի աստիճանական ինտեգրումն է՝ համակարգային որոշ տարրերի փոփոխման պահանջի առաջաջամամբ:

Հարկ է նշել, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Չինաստանի արտաքին քաղաքականությունն էական փոփոխությունների է ենթարկվել: 1970-ական թվականների վերջից այդ երկրի արտաքին քաղաքականության հիմքը Դեն Սյաո Պինի առաջ քաշած «Քոդարկել սեփական փայլը եւ զարգացնել երկրի ներքին ուժը» կարգախոսն էր, որը ենթադրում էր բավական զգուշավոր քաղաքականության իրականացում: Սակայն ներկայումս Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարությունում զգալի նորամուծություններ են կատարվել: 2009թ. կեսերին Չինաստանի բարձրաստիճան ղեկավարության եւ դիվանագիտական կորպուսի հանդիպման ժամանակ նախագահ Յու Չին Թաոն կոչ արեց դիվանագետներին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը Չինաստանը քաղաքականապես առավել ազդեցիկ եւ տնտեսապես առավել մրցունակ դարձնելու ուղղությամբ եւ միաժամանակ նպաստել արտաքին աշխարհում Չինաստանի հեղինակության աճին:

Միջազգային քաղաքական եւ տնտեսական համակարգում առավել ազդեցիկ դերակատարում ստանձնելու պաշտոնական Պեկինի ձգտումն ուղղակիորեն առնչվում է ԱՄՆ – Չինաստան հարաբերություններին: Ներկայումս այդ հարաբերություններն առաջին հերթին բնորոշվում են տնտեսական փոխկախվածությամբ: ԱՄՆ ներքին շուկան չինական արտադրանքի թիվ մեկ սպառողն է: Վերջին տասը տարիների ընթացքում Չինաստանի տնտեսական աճի հիմքն արտահանման անընդհատ աճող տեմպերն էին, եւ այստեղ ամերիկյան շուկայի առկայությունը վճռորոշ նշանակություն ուներ: Ամերիկյան տնտեսության փլուզումը ոչ միայն լուրջ հարված կհասցնի չինական արտահանմանը, այլեւ զգալիորեն կարժեզրկի Չինաստանի տարադրամային պահուստները, որոնք կազմում են շուրջ 2.4 տրիլիոն դոլար: Իր հերթին Չինաստանը ԱՄՆ պետական

պարտքի հիմնական ֆինանսավորողն է, ինչը թույլ է տալիս ամերիկյան տնտեսությանը խուսափել կտրուկ անկումից: ԱՄՆ-ի հետ հարաբերությունները Չինաստանի համար կարևոր են նաև միջազգային համակարգում սեփական դիրքերի ամրապնդումն արագացնելու տեսանկյունից: Չնայած ԱՄՆ ազդեցության թուլացման միտումներին, առայժմ այդ պետությունը պահպանում է առաջատար դիրքեր միջազգային ասպարեզում եւ ի վիճակի է որոշակիորեն խոչընդոտել տարբեր կառույցներում Չինաստանի ազդեցության ավելացմանը: Այս առումով հատկանշական է 2001թ. Չինաստանի անդամակցումը Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը, երբ վերջինս հարկադրված էր բավականաչափ պարտավորություններ ստանձնել միջազգային առեւտրի համակարգում ընդգրկվելու համար:

ԱՄՆ – Չինաստան հարաբերություններում, տնտեսականից բացի, զգալի նշանակություն ունի նաև քաղաքական գործոնը: Չինաստանի դիրքորոշումը կարևոր էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի ընդունման գործընթացում, այդ պետությունը լուրջ դերակատարում ունի Հյուսիսային Կորեայի միջուկային ծրագրի շուրջ ընթացող վեցակողմ բանակցություններում: Չինաստանի հետ դրական հարաբերությունների պահպանումը հնարավորություն կտա ԱՄՆ-ին ամրապնդել դիրքերն ասիական տարածաշրջանում եւ միաժամանակ հավելյալ լծակներ ստանալ թե՛ Ռուսաստանի եւ թե՛ նոր ձեւավորվող ազդեցության այլ կենտրոնների հետ հարաբերություններում: Այս առումով պետք է նշել, որ ԱՄՆ-ը հաջողությամբ շահարկում է «Մեծ երկյակի» (G-2) ստեղծման հնարավորությունը՝ ակնարկելով, որ այդ դեպքում միջազգային կարևոր շատ հարցեր կարող են լուծվել ԱՄՆ-Չինաստան երկկողմ հարաբերությունների շրջանակում՝ այդ գործընթացից դուրս թողնելով այլ ազդեցիկ խաղացողների: Չնայած հարկ է նշել, որ առնվազն միջնաժամկետ հեռանկարում նման կառույցի ստեղծումը խիստ անհավանական է:

Ամենայն հավանականությամբ, չին-ամերիկյան հարաբերություններում առաջիկա տարիների ընթացքում կշարունակվեն ներկա միտումները՝ համագործակցություն այն խնդիրների շուրջ, որտեղ առկա է շահերի որոշակի համընկնում եւ քողարկված պայքար այն ոլորտներում, որտեղ շահերի համընկնումը բացառվում է: Առաջիկայում երկկողմանի հարաբերություններում որոշակի խնդիրներ կարող են ծագել Չինաստանի ռազմական ծախսերի առնչությամբ: ԱՄՆ Պաշտպանական վերանայման 2010թ. զեկույցում հստակ նշվում է Չինաստանի ռազմական ծախսերի, ինչպես նաև այդ ոլորտում որոշումների ընդունման մեխանիզմների

թափանցիկության պակասի մասին: Այնուամենայնիվ, երկու պետությունների միջև հարաբերությունների կտրուկ սրումը քիչ հավանական է, քանի որ թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Չինաստանն առնվազն մի որոշակի ժամանակահատված զգալու են միմյանց կարիքը:

### **Ռուսաստան – Չինաստան**

Վերջին տարիների ընթացքում Չինաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը երկնիչ աճ ապահովող տնտեսությանն անհրաժեշտ հումքի, առաջին հերթին էներգակիրների կայուն մատակարարումն ապահովելն է: Չինաստանի համար էներգակիրների հիմնական մատակարարների թվում են Մերձավոր Արեւելքը, Լատինական Ամերիկան, Արեւելյան Աֆրիկան, Ավստրալիան: Այդ բոլոր տարածաշրջաններից Չինաստանն էներգակիրներ է ներմուծում ծովային ճանապարհով, ինչը չի կարող համարվել լիարժեք ապահով երթուղի: Ազդեցիկ ուժային կենտրոններից մի քանիսը, առաջին հերթին ԱՄՆ-ը, տեսականորեն կարող են խոչընդոտել ծովային երթուղով Չինաստան հումքի մատակարարումը, իսկ նույնիսկ կարճաժամկետ խափանումները լուրջ բացասական ազդեցություն կթողնեն Չինաստանի տնտեսության վրա: Պատահական չէ, որ վերջին տարիներին Չինաստանը ջանքեր է գործադրում ցամաքային ճանապարհով էներգակիրների մատակարարման երթուղիներ ձեւավորելու համար՝ Իրանից, Կենտրոնական Ասիայից եւ Ռուսաստանից: Սակայն Իրանից էներգակիրների մատակարարումն հնարավոր է միայն Աֆղանստանի եւ Պակիստանի տարածքով, երկրներ, որտեղ անկայուն իրավիճակն ու ԱՄՆ ազդեցությունն առնվազն միջնաժամկետ հեռանկարում պահպանվելու են:

Այս առումով համեմատաբար ավելի անվտանգ է Կենտրոնական Ասիայից մատակարարումների կազմակերպումը: Չինաստանն այս ուղղությամբ ակտիվ գործունեություն է իրականացնում: Շանհայի համագործակցության կազմակերպության Տաշքենդում կայացած վերջին զագաթաժողովի ընթացքում Չինաստանը Ուզբեկստանի հետ համաձայնագիր ստորագրեց տարեկան 10 միլիարդ խորանարդ մետր գազի մատակարարման վերաբերյալ: Ավելի վաղ Չինաստանը 40 միլիարդ խորանարդ մետր գազի մատակարարման պայմանագիր էր ստորագրել Թուրքմենստանի եւ 10 միլիարդ խորանարդ մետր գազի մատակարարման պայմանագիր՝ Ղազախստանի հետ: Սակայն Կենտրոնական Ասիայից Չինաստան էներգակիրների մատակարարումը հնարավոր է իրականացնել Չինաստանի Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանի

տարածքով, որտեղ, չնայած կառավարության ձեռնարկած բոլոր ջանքերին, դեռևս երկար ժամանակ բավական բարձր է լինելու ահաբեկչական գործողությունների վտանգը: Ստեղծված պայմաններում էներգակիրների մատակարարման առավել անվտանգ երթուղի է համարվում Ռուսաստանի հեռավորարեւելյան տարածաշրջանից էներգակիրների ներմուծումը: Չինական տարբեր ընկերություններ վերջին տարիներին զգալի ներդրումներ են կատարել այդ տարածաշրջանում: Տնտեսական համագործակցությունը, առաջին հերթին Չինաստանի տնտեսությանը հումքի մատակարարումը, ռուս-չինական հարաբերությունների անկյունաքարն են: Իհարկե, երկկողմ հարաբերություններում էական դեր է խաղում նաև Կենտրոնական Եվրասիայում Արեւմուտքի եւ առաջին հերթին ԱՄՆ ազդեցության սահմանափակման նպատակը, որին Ռուսաստանը եւ Չինաստանը փորձում են հասնել առաջին հերթին Շանհայի համագործակցության կազմակերպության միջոցով:

Չնայած Ռուսաստանն ինքը շահագրգռված է Չեռավոր Արեւելքում եւ նաև Սիբիրում օտարերկրյա, այդ թվում չինական, ուղղակի ներդրումների ներգրավմամբ, ինչպես նաև Չինաստանի հետ համատեղ Կենտրոնական Եվրասիայում ԱՄՆ ազդեցության սահմանափակմամբ, այնուամենայնիվ, Կրեմլին անհանգստացնում է Սիբիրի եւ Չեռավոր Արեւելքի՝ չինական տնտեսության հուճքային կցորդի վերածման հեռանկարը: Իրադարձությունների զարգացման այդ սցենարի դեպքում երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանը կարող է փաստացի կորցնել սեփական ազդեցությունն այդ տարածաշրջաններում, ինչն առավել հավանական է դառնում նշված շրջաններում բնակչության թվի նվազման եւ Չինաստանից ապօրինի ներգաղթի անընդհատ աճող տեմպերի պայմաններում: Նման զարգացումը կանխելու համար Ռուսաստանը շահագրգռված է նշված տարածաշրջաններում այլ պետությունների ներդրումների ներգրավմամբ, որոնք թույլ կտան որոշակիորեն հավասարակշռել Չինաստանի ազդեցությունը եւ միաժամանակ առավել նպաստավոր պայմաններ ստեղծել այդ շրջանների զարգացման համար: Այս առումով Ռուսաստանի համար չափազանց կարեւոր են արեւմտյան, այդ թվում՝ ամերիկյան ներդրումները, ինչին կարելի է հասնել ԱՄՆ-ի, ինչպես նաև Եվրամիության հետ հարաբերությունների բարելավման միջոցով:

### **ԱՄՆ – Ռուսաստան**

Բարաք Օբամայի վարչակազմի կողմից հռչակված ռուս-ամերիկյան հարաբերությունների վերագործարկումը որոշակիորեն բարելավել է երկկողմ հարաբերությունները: Եթե Բուշ Կրտսերի վարչակազմի վերջին

տարիներին այդ հարաբերություններն ընդհուպ մոտեցել էին «Սառը պատերազմի» մակարդակին, ապա այժմ դրանք բնորոշվում են բարիդրացիական եզրույթով: Կողմերին հաջողվել է զգալի տեղաշարժ արձանագրել մի շարք ուղղություններով: Ստորագրվեց ռազմավարական սպառազինությունների կրճատման մասին նոր պայմանագիր, Ռուսաստանը ՄԱԿ Անվտանգության խորհրդում կողմ քվեարկեց Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւին եւ պաշտոնապես հայտարարեց Իրանին հակաօդային եւ հակահրթիռային պաշտպանության համակարգերի վաճառքի արգելման մասին: Իր հերթին ԱՄՆ-ը փաստացի դադարեցրել է հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի շահերի դեմ ուղղված գործողությունների իրականացումը, չնայած հրապարակային հայտարարություններում Օբամայի վարչակազմի ներկայացուցիչները շարունակում են հայտարարել նշված տարածաշրջանում Ռուսաստանի առանձնահատուկ շահերի առկայության հայեցակարգի՝ ԱՄՆ-ի կողմից մերժման մասին: Ռուս-ամերիկյան ներկա հարաբերություններում որոշակի դերակատարում ունի նաեւ Չինաստանի գործոնը: Թե՛ ԱՄՆ-ը եւ թե՛ Ռուսաստանը միմյանց փորձում են օգտագործել Չինաստանի ազդեցության հավասարակշռման համար: Միաժամանակ, կողմերը Չինաստանի հետ հարաբերությունների հետագա սերտացումը դիտում են որպես միմյանց նկատմամբ անուղղակի ճնշում գործադրելու միջոց:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ**  
**ԵՎ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ**  
*Սուրեն Սարյան*

Եվրոպական ինքնություն ասելով՝ նախ եւ առաջ պետք է հասկանալ պատմական եւ քաղաքակրթական մի ընդհանրություն: Հենց այդ ընդհանրության շնորհիվ է հնարավոր խոսել Եվրոպայի՝ որպես միասնական քաղաքակրթության եւ ինքնության մասին, մինչդեռ ասիական կամ աֆրիկյան ինքնություններ՝ որպես այդպիսին, գոյություն չունեն: Այդ պատճառով եվրոպական ինքնությունն առավել ցայտուն կերպով ընկալվում է դրսից. բոլոր ոչ եվրոպացիները, որպես կանոն, եվրոպացիներին դիտարկում են որպես մի ամբողջություն: Այդ ամբողջությունն իր մեջ միավորում է ազգային պետությունների ինքնությունները, որոնք, սակայն, այսօր գտնվում են վերափոխման գործընթացում, որն ընթացում է եվրոպական աշխարհիկության եւ Եվրոպա ներթափանցած ու արմատավորված այլ մշակույթների, առաջին հերթին՝ իսլամի միջեւ հակադրության տեսքով:

Դեռեւս 1970-ականներին հռչակավոր ֆրանսիացի քաղաքագետ Ռայմոն Արոնը գրում էր, որ եվրոպացիներն իրենց կարծես թե դուրս են բերել պատմությունից, այն մեծ պատմությունից, որը նրանք կերտել են արյունալի տառերով: Ջտելով հետպատերազմյան Եվրոպան պատերազմի բերած գործոններից՝ ռասիզմից, միլիտարիզմից, շովինիզմից, եվրոպական էլիտաները դրա հետ նաեւ ազատվեցին հայրենասիրության, ազգային հպարտության եւ մրցունակության երեւույթներից: Ազգային օրհներգերի կատարումը կամ դրոշների ծածանումը որոշ երկրներում սկսեց ընկալվել որպես ծայրահեղ ազգայնականների կամ ֆուտբոլային մոլեռանդների զբաղմունք:

Ավելին, այլ մշակույթների եւ դրանց կրողների (ներգաղթածների) նկատմամբ հանդուրժողական մոտեցումը եւ բազմամշակութայնության խրախուսումը դարձել էին Եվրոպայի էլիտաներին բնորոշ յուրահատկություններ: Պարզ ասած, Եվրոպայում փորձեցին կրկնել ամերիկյան օրինակը:

Սինչդեռ, ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ ամերիկյան ինքնությունը կառուցված է Ամերիկայի՝ որպես քաղաքական հավատամքի եւ քաղաքա-

ցիության սկզբունքների վրա, Եվրոպայում ինքնության մեջ շարունակում են կարելու դեր խաղալ ազգային եւ կրոնական սկզբունքները: Իսկ դրանք ավանդորեն կապված են եղել «յուրային–օտար» կամ «մենք–նրանք» հասկացությունների հետ:

Այս համատեքստում, այսօր Եվրոպական քաղաքականության առաջնային թեմա են դարձել ներգաղթի հետ կապված խնդիրները: Արեւմտյան Եվրոպայի երկրների միգրացիոն քաղաքականության արդյունքում Եվրոպական համընդհանուր բարեկեցության մոդելին եւ Եվրոպական աշխարհիկությանը լուրջ վտանգ է սպառնում: Եվրոպական էլիտաները կարծում էին, թե պետք է թույլ տալ Ասիայից եւ Աֆրիկայից բնակչության ներգաղթը՝ էժան աշխատուժի հարցը լուծելու համար (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մայրցամաքում առաջացած ժողովրդագրական բացի պայմաններում): Սակայն այդ էլիտաները չէին սպասում, որ ներգաղթի հետ կգան նաեւ ասիական եւ աֆրիկյան երկրների մշակույթը, կացութաձեւը: Առավել եւս, որ տնտեսական օգուտն այդ ներգաղթյալներից եղավ նվազագույն. պաշտոնական տվյալներով՝ այսօր Եվրոպա ներգաղթածների միայն 1/3-ն է իրականում աշխատում: Արդյունքում՝ միգրացիոն քաղաքականությունը սկսում է հարուցել ավելի ու ավելի մեծ թվով Եվրոպացիների դժգոհությունը:

Որպես այս իրողությունների հետեւանք՝ մայրցամաքում հնչում են ձայներ, որ Եվրոպան արդեն անձնատուր է եղել օտարածին քաղաքակրթության առաջ եւ չի կրող դիմակայել մահացու վտանգ ներկայացնող մահմեդականների ներգաղթին: Մյուս տեսակետն այն է, որ հենց ներկա ժամանակաշրջանում սկսվում են գործի դրվել Եվրոպայի կամխարգելման մեխանիզմները, եւ հերթական անգամ Եվրոպական ինքնությունն, անցնելով ճգնաժամի միջով, կգնա դեպի նոր վերածնունդ:

Եվ եթե նախկինում Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի կամ Յուլանդիայի նման երկրներում ազգային ինքնության հարցերի բարձրացումը համարվում էր քաղաքականապես ոչ կոռեկտ, ապա այսօր դա արդեն հանրային քննարկումների առարկա է:

Այդ քննարկումներում ասվում է, որ Եվրոպան, փորձելով կիսել իր ինքնությունն այլ մշակույթներ ներկայացնողների հետ, բախվում է մահմեդականների կողմից կրոնական արմատականության տարածմանը, որը ներկայացվում է որպես պատասխան Եվրոպայում բարոյական թողտվության եւ արմատական անաստվածության երեւույթներին,

ինչպես, օրինակ, համասեռամուլների ամուսնությունները, թմրանյութերի համատարած օգտագործումը, ընտանիքի գաղափարի արժեզրկումը: Ավելին, եվրոպացի տարբեր ինտելեկտուալներ նշում են, որ իսլամիզմը, համասեռամուլությունը եւ արմատական ազատականությունը կազմել են յուրատեսակ դաշինք ընդդեմ ավանդական եվրոպական արժեքների՝ քրիստոնեության, հռոմեական իրավունքի եւ ավանդական ընտանիքի:

Փաստորեն, ամբողջ XX դարը, եւ XXI դարի սկիզբը եվրոպան գնում էր նոր՝ հետքրիստոնեական ինքնության ստեղծման ճանապարհով: Սակայն այդ ինքնությունն, իր բոլոր տեխնոլոգիական առավելություններով հանդերձ, ցույց է տալիս իր ծայրահեղ լղոզվածությունը եւ անարդյունավետությունն այլ ավանդական մշակույթների հետ բախման դեպքերում:

Իր հերթին, իսլամն առաջ քաշեց իսլամիզմի՝ որպես քաղաքական եւ կրոնական կարգի գլոբալ տարածման հակառակադիտ, այդ թվում՝ եվրոպական մայրցամաքում: Հետաքրքրական է, որ եվրոպայում բնակվող մահմեդականների երկրորդ կամ երրորդ սերունդներն ավելի արմատական են տրամադրված եվրոպական արժեքների նկատմամբ, քան իրենց ծնողները: Հենց նրանք են քարոզում շարիաթի օրենքների ներմուծումը եվրոպական երկրներ:

Իսլամական էքսպանսիան, ի վերջո, ծնեց հակազդեցություն: 2009թ. Շվեյցարիայում կայացած մինարենների կառուցման արգելքի հարցով հանրաքվեի արդյունքները, երբ ընտրողների 58%-ը քվեարկեց մինարենների կառուցումն արգելելու օգտին, ցույց տվեցին, որ իսլամը դառնում է լուրջ խնդիր եվրոպացիների աշխարհընկալման համար: Առաջին անգամ եվրոպական երկրի մեծամասնությունը հստակ հանդես եկավ մահմեդական էքսպանսիայի նախագծի դեմ:

Շվեյցարական հանրաքվեին հաջորդեցին բելգիական եւ ֆրանսիական խորհրդարանների որոշումները՝ մահմեդական կանանց ավանդական զգեստների մասերի՝ փարանջա եւ բուրկա (նիքաբ) կրելն արգելելու մասին: Ֆրանսիական իշխանությունները նաեւ արգելեցին կանանց մահմեդական գլխաշորի՝ հիջաբի կրումը պետական եւ ուսումնական հաստատություններում: Որպես այդ որոշումների հիմնավորում բերվեց այն, որ բուրկա եւ հիջաբ կրելը հակասում է եվրոպական սեկուլյարիզմի եւ սեռական իրավահավասարության սկզբունքներին:

Այս ֆոնին ավելի հնչեղ են դառնում եվրոպական նեոպահպանողականների ձայները, որոնք հայտարարում են, թե անհրաժեշտ է



պաշտպանել ազգային իրավունքները, ավանդույթները, մշակույթը: Եվրոպայի այժմյան պահպանողականությունը՝ որպես եվրոպական ժողովուրդների զարգացման գրավական, առաջին հերթին տեսնում է ինքնության պահպանումը: Այդ հոսանքի ներկայացուցիչները շեշտում են, որ չի կարող լինել այնպիսի զարգացում, երբ հասարակությունը կամ ազգը կորցնում են իրենց դիմագիծը, արժեքային աշխարհը:

Եվրոպական նոր պահպանողականների համար գլխավոր քաղաքական կարգախոսը դարձավ հակախլամիզմը: Այսպես, հոլանդական աջ Ազատության կուսակցության առաջնորդ Յերտ Վիլտերսը, որն առավել արմատական է տրամադրված իսլամի հանդեպ, հայտարարում է, որ իր նպատակը հոլանդական ազգային ինքնության պահպանումն է՝ շեշտելով, որ Եվրոպան մահմեդական մայրցամաք չէ: Վերջերս էլ Վիլտերսը, ելույթ ունենալով բրիտանական խորհրդարանում, կոչ արեց պաշտպանել Եվրոպան իսլամից, նշելով, որ պետք է արգելել նոր մզկիթների կառուցումը, այն պարագայում, երբ քրիստոնյաների հալածանքներ են տեղի ունենում Թուրքիայում, Իրանում, Պակիստանում:

Ներկա ժամանակաշրջանում հստակ երեւում է այն միտումը, որ Եվրոպայում թափ են հավաքում հենց հակամահմեդական տրամադրությունները, ինչի շնորհիվ աճում է ներգաղթը խստացնելու կամ դադարեցնելու օգտին հանդես եկող պահպանողական կամ աջ կուսակցությունների ժողովրդականությունը: Ընտրություններում եվրոպացիները զանգվածայնորեն քվեարկում են պահպանողական եւ ազգայնական ուժերի օգտին, որոնք խոստանում են վերադառնալ կյանքի ավանդական կացութաձեւին: 2010թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում Շվեդիայում առաջին անգամ խորհրդարանում տեղեր ստացավ ծայրահեղ աջ Շվեդական ժողովրդավարական կուսակցությունը, որի առաջնորդները հայտարարում են, որ Շվեդիայի համար այսօր մեծագույն վտանգը մահմեդականների ներգաղթն է:

Նմանապես աջ պահպանողական ուժերը զգալի հաջողություններ արձանագրեցին Նիդեռլանդներում, որտեղ վերոնշյալ Ազատություն կուսակցությունը գրավեց երրորդ տեղը՝ խորհրդարանում իր տեղերն ավելացնելով 9-ից մինչեւ 24: Մեծ Բրիտանիայում վերջին ընտրություններում հաղթանակ տարած Պահպանողական կուսակցության առաջնորդ Դեւիդ Քամերոնը կոչ է անում սահմանափակել ներգաղթը:

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին վերջերս կազմակերպեց քննարկումներ՝ ֆրանսիական ազգային ինքնության հարցի վերաբեր-

յալ: Երկրի ղեկավարն ուղղակի կապակցեց երկրում անվտանգության ու կարգուկանոնի ապահովման հարցը ներգաղթի խնդրի հետ:

Գերմանիայում ամռանը լույս է տեսել երկրի Կենտրոնական բանկի վարչության անդամ Թիլո Սարացինի հեղինակած «Գերմանիայի ինքնավերացումը» անվամբ գիրքը, որը բավական մեծ հասարակական հնչեղություն ձեռք բերեց: Գիրքը շոշափում է Գերմանիա ներգաղթածների խնդիրը: Սարացինն անվանում է մահմեդական ներգաղթյալներին ծրիակերներ, որոնք աշխատելու փոխարեն միայն երեխաներ են ծնում: Ընդ որում, մահմեդականների կողմից ինտեգրվելու ցանկության բացակայության հետեւանքով, գերմանական հասարակությունն ի վիճակի չի լինելու լրացնել որակյալ մասնագետների պակասը, ինչը կբերի երկրի արտադրական, կրթական եւ մշակութային մակարդակի կտրուկ անկմանը: Սարացինը շեշտում է, որ արաբ եւ թուրք ներգաղթյալները որեւէ գործնական օգուտ չեն բերում, չեն զբաղվում արտադրական գործունեությամբ եւ միայն միրգ ու բանջարեղեն են վաճառում: 1979–2000թթ. ընթացքում Գերմանիայում բնակվող թուրքերի թիվը հասավ 3-ից մինչեւ 7,5 մլն, ընդ որում՝ աշխատում է միայն մոտ 2 մլն-ը: Մնացածները շահագործում են գերմանական սոցիալական ապահովության համակարգը: Բացի այդ, Գերմանիայի թուրքական բնակչության զգալի մասն ընդհանրապես չի խոսում գերմաներեն:

Թ.Սարացինը զգուշացնում է, որ մահմեդականները գրավում են եվրոպան իրենց ծնելիության մակարդակով, եւ եթե այդպես շարունակվի, ապա կփոխվի Գերմանիայի մշակույթը, գերմանական մտածելակերպը: Այդ դեպքում, 80 տարի անց գերմանացիները կդառնան ազգային փոքրամասնություն սեփական երկրում: Որպես լուծում՝ Սարացինը, Վիլտերսի նման, կոչ է անում արգելել Մերձավոր ու Միջին Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներից ներգաղթը՝ խրախուսելով գերմանացիների ծնելիության աճը, ինչի նպատակով պետք է պահպանել գերմանական ավանդական մշակութային արժեքները:

Գրքի հրապարակումից հետո Թ.Սարացինին պարտադրեցին հրաժարական տալ ԿԲ վարչության անդամի պաշտոնից: Մինչդեռ Գերմանիայում հարցումները ցույց են տալիս, որ Սարացինի դիրքորոշմանն աջակցություն է հայտնել բնակչության 70%-ը: Այսինքն՝ Սարացինը հնչեցրեց այն, ինչի մասին մտածում էր գերմանացիների, ընդհանրապես՝ եվրոպացիների կեսից ավելին: Փորձագետները մշում են, որ Սարացինի գիրքը հանեց կարեւորագույն տաբուներից մեկը, որն առկա

եր Գերմանիայում 1945 թվականից հետո՝ ազգային հարցի քննարկումը:

Նշված զարգացումները ցույց են տալիս, որ Եվրոպայում առկա է խզում հասարակությունների եւ քաղաքական իշխող էլիտաների միջեւ: Մինչ էլիտաները շարունակում են քարոզել մահմեդական սփյուռքի ինտեգրման գաղափարը՝ որպես արեւմտյան եւ իսլամական քաղաքակրթությունների մերձեցման կամուրջ, Եվրոպական նոր աջերն ավելի լավ են ընկալում սովորական քաղաքացիների մտավախությունները: Մայրցամաքի քաղաքական վերնախավի մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում նոր աջերի գաղափարներին՝ որակելով դրանք որպես անհանդուրժողականության եւ ծայրահեղականության դրսեւորում: Այդուհանդերձ, եթե որոշ ժամանակ առաջ այդ գաղափարները պարզապես արհամարհվում էին, ապա աճող հասարակական աջակցությունը եւ հանրային քննարկումներն այլեւս անհնար են դարձնում նման մոտեցումը: Անգամ Դանիայում կառավարության անդամներից մեկը վերջերս ուղղակի հայտարարեց. «Խնդիրն այն է, որ դուք չեք կարող ինտեգրել մահմեդականների մեծ հատված մի երկրում, որի մշակութային հիմքը քրիստոնեական է»:

Եվրոպացիներն աստիճանաբար ավելի լավ են հասկանում, որ իրենց կողմից հանդուրժողականության դրսեւորումը բավարար չէ բազմամշակութային եւ ինտեգրված նոր Եվրոպական ինքնություն կերտելու համար: Դրա համար պահանջվում է նաեւ մյուս կողմի պատրաստակամությունը՝ Եվրոպական կենսակերպի մեջ ինտեգրվելու: Արդյունքում՝ Եվրոպական երկրներին չհաջողվեց ինտեգրել իրենց հասարակությունների մեջ մահմեդական ներգաղթյալների զգալի մասին, որոնք շարունակում են ապրել փակ համայնքային կյանքով:

Յարկ է նշել, որ 2010թ. հոկտեմբերի վերջին Շվեյցարիայում նախատեսվում է անցկացնել նոր հանրաքվե՝ արդեն ներգաղթի կարգի վերաբերյալ: Ֆրանսիայի Ազգային ժողովը եւս նախատեսում է խստացնել միջոցներն ընդդեմ այն ներգաղթողների, որոնք չեն ցանկանում հետեւել երկրի օրենքերին ու ավանդույթներին: Փորձագետների կարծիքով, Ֆրանսիայից, Գերմանիայից եւ Բելգիայից գնչուների արտաքսումը, որը տեղի է ունենում վերջին ամիսներին, նույնպես կոչված է ցուցադրել Եվրոպական իշխանությունների մտադրությունը՝ խստացնել միգրացիոն քաղաքականությունը եւ ծառայել որպես զգուշացում Ասիայից ու Աֆրիկայից ներգաղթողների համար: Այս ամենը ցույց է տալիս, որ Եվրոպայում, իրոք, սկսում են գործել կանխարգելման մեխանիզմները:

Հատկանշական է, որ Արեւելյան Եվրոպայի երկրներն արդեն գործնական քայլեր են կատարում Արեւմտյան Եվրոպայի երկրների սխալների կրկնությունը թույլ չտալու համար: Այսպես, Լեհաստանի միգրացիոն ծառայություններն ուղղակի հայտարարեցին, որ Ասիայից եւ Աֆրիկայից ներգաղթյալների համար մուտքն արգելվում է, եւ որոշում կայացվեց թույլ տալ միայն սլավոնական ծագմամբ օտարերկրացիների ներգաղթը: Եթե լեհերն իրենք մեկնում են դեպի արեւմտաեվրոպական երկրներ, ապա Լեհաստան են գալիս ուկրաինացիներ, ռուսներ ու բելառուսներ՝ մշակութային եւ լեզվական առումներով լեհերին մոտ ժողովուրդներ:

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Ռուբեն Մելքոնյան</b> <b>ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ</b> <b>ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ</b> .....	<b>1</b>
<b>Արեստակես Սիմավորյան</b> <b>ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԸ</b> .....	<b>6</b>
<b>Կարեն Վերանյան</b> <b>«ԱԴԻԲԵՉԱՆ. ԽՈՑԵԼԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ»</b> <b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ ԶԵԿՈՒՅՑԸ</b> .....	<b>12</b>
<b>Արտաշես Տեր-Հարությունյան</b> <b>ԹՈՒՐՔԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ</b> <b>ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ</b> .....	<b>17</b>
<b>Հայկ Գաբրիելյան</b> <b>ԹՈՒՐՔ – ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ</b> <b>ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ</b> .....	<b>23</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b> <b>ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ</b> .....	<b>28</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ԻՐԱՔՅԱՆ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ</b> .....	<b>33</b>
<b>Բենիամին Պողոսյան</b> <b>ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱՄՆ – ՉԻՆԱՍՏԱՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ</b> <b>ԵՌԱՆԿՅՈՒՆՈՒՄ</b> .....	<b>40</b>
<b>Սուրեն Սարյան</b> <b>ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ</b> <b>ԵՎ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ</b> .....	<b>46</b>

*Շապիկին պատկերված է  
Թարթառ գետի հովիտը  
Դադի վանքի մոտ (Արցախ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: